ՕԺՏՎԱԾ Ի ՎԵՐՈՒՍՏ

ՏԱՃԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ



ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ

ՕԺՏՎԱԾ Ի ՎԵՐՈՒՍՏ

ՏԱՃԱՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՍԵՄԻՆԱՐ

ՈՒՍՈՒՑՉԻ ՁԵՌՆԱՐԿ

Հրատարակված՝
Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա, ԱՄՆ

© 2003 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները վերապահված են
Երկրորդ հրատարակություն 2003
Printed in Germany

Անգլերենի հաստատումը. 3/03
Թարգմանության հաստատումը. 3/03
Endowed From On High: Temple Preparation Seminar-ի թարգմանությունը
Armenian

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան iv

1. Տաճարը սովորեցնում է փրկության մեծ ծրագիրի մասին 1

2. Մենք պետք է տաճար մտնելու արժանի լինենք 6

3. Տաճարային աշխատանքը կյանքում մեծ օրհնություններ է բերում 13

4. Տաճարային արարողությունների եվ ուխտերի ստացում 17

5. Սովորելով Տիրոջից խորհրդանիշների միջոցով 22

6. Պատրաստվել մտնելու սուրբ տաճար 28

7. Շարունակելով վայելել տաճար հաճախելու օրհնությունները 33

ՆԱԽԱԲԱՆ

ՆՊԱՏԱԿԸ

Հրահանգների այս դասընթացը նախատեսված է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներին օգնելու համար, որպեսզի նախապատրաստվեն և ստանան տաճարային երաշխավորագրեր և այցելեն տաճար: Անդամները, ովքեր նախկինում եղել են տաճարում, նույնպես կարող են անցնել դասընթացը՝ տաճարների մասին ավելի շատ բան սովորելու համար:

ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐ

Այս դասընթացի մասնակիցները պետք է տաճար գնալու ցանկություն ունենան և արժանի լինեն տաճարային երաշխավորագրի: Եթե նրանք դեռ չեն ստացել երաշխավորագիր, պետք է նախապատրաստվեն, որպեսզի ստանան այն:

Պարտադիր պայման չէ, սակայն, եթե մասնակիցները դեռ չեն անցել Կիրակնօրյա Դպրոցի դասընթացը, որտեղ քննարկվում է *Ավետարանական Հիմունքներ* ձեռնարկը, խորհուրդ է տրվում, որ նրանք անցնեն այն, նախքան այս դասընթացին մասնակցելը: Նախքան այս դասընթացն անցնելը, նրանք պետք է բավականաչափ գաղափար ունենան ավետարանական հիմնական ուսմունքների և սկզբունքների վերաբերյալ և պատրաստակամ լինեն հնազանդվելու Աստծո պատվիրաններին, ինչպիսիք են՝ մաքրաբարոյության օրենքը, հանգստության օրը սուրբ պահելը, Իմաստության Խոսքը և տասանորդի օրենքը: Արժանավորությունը և արդարակեցության անհատական ձգտումը անհրաժեշտ նախապայմաններ են տաճարային արարողություններին մասնակցելու համար:

Եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի ղեկավարությամբ ծխի կամ ճյուղի խորհուրդը կարող է քննարկել ուղիներ, թե ինչպես կարելի է դասընթացն օգտագործել, որպես իրենց ջանքերի մի մաս՝ ընտանիքները զորացնելու և Մելքիսեդեկյան Քահանայություն ստանալու համար տղամարդկանց օգնելու համար:

Յուրաքանչյուր մասնակից եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի կամ էլ ծխի կամ ճյուղի Մելքիսեդեկյան Քահանայության մեկ այլ ղեկավարի կողմից պետք է դասերին մասնակցելու անհատական հրավեր ստանա:

ԺԱՄԱՆԱԿԸ և ՏԵՂԸ

Այս դասընթացի խմբերը կարող են տարբերվել չափսերով, բայց սովորաբար դրանք պետք է ուսուցանվեն փոքր խմբերում ծխի կամ ճյուղի մակարդակով: Դասերը կարելի է անցկացնել ժողովատանը կամ տանը: Ուսուցման տեղը, ժամանակը և հաճախակիությունը պետք է հարմարեցվի մասնակիցներին և ուսուցչին:

Նյութը բաժանված է յոթ դասերի: Սակայն ուսուցիչները յուրաքանչյուր դասի վրա պետք է այնքան ժամանակ ծախսեն, որքան դասընթացի մասնակիցներին անհրաժեշտ կլինի: Յուրաքանչյուր դասի համար կարող է պահանջվել մեկ դասաժամից ավել ժամանակահատված:

ԴԱՍԸՆԹԱՑՐ ՆՅՈՒԹԵԻ

Լսարանում դասընթացի յուրաքանչյուր մասնակցի համար սուրբ գրքերը պետք է մատչելի լինեն: Յուրաքանչյուրը պետք է նաև ունենա *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* (36793) գրքույկի մեկ օրինակ, որն այս դասընթացին կից ընթերցանության հավելված է ուսանողների համար: Դասերի ընթացքում այդ գրքույկից հաճախ են մեջբերումներ կատարվում և դասընթացի մասնակիցներին պետք է խնդրել, որ այն կարդան դասընթացի ուսուցման շաբաթների ընթացքում:

ՈՒՍՈՒՑՉՆԵԻ

Այս դասընթացն ուսուցանելու համար կարելի է կանչել անհատների կամ ամուսնացած զույգերի: Ուսուցիչները պետք է հաստատուն վկայություն ունենան ավետարանի վերաբերյալ և զգայուն լինեն Հոգու հուշումների հանդեպ: Նրանք պետք է օժտում ստացած անդամներ լինեն, ովքեր ընթացիկ տաճարային երաշխավորագրեր ունեն և, ովքեր հասկանում են տաճարում տեղի ունեցող բաների կարևորությունը և դրանց սրբազան լինելը:

Հնարավորության դեպքում ուսուցիչները պետք է մասնակիցներին ուղեկցեն տաճար, երբ վերջիններս ստանում են իրենց տաճարային արարողությունները:

ԱՌԱՋԱԻԿՆԵԻ ՈՒՍՈՒՑՉՐ ՀԱՄԱԻ

Նախքան տաճար մտնելը, Եկեղեցու անդամները պետք է հոգեպես պատրաստ լինեն: Որպես այս նախապատրաստության մի մաս, նրանք պետք է բավականաչափ գաղափար ունենան փրկության ծրագրի և տաճարային աշխատանքի վարդապետությունների վերաբերյալ: Նախապատրաստության ընթացքում ձեզ արտոնություն է տրված՝ օգնել մարդկանց, առաջնորդելով նրանց դեպի իրենց կյանքում ամենասրբազան փորձառություններից մեկը: Զգայուն եղեք Հոգու հուշումների հանդեպ, որպեսզի կարողանաք դասի նյութը մասնակիցներին ներկայացնել մի այնպիսի ձևով, որը լավագույնը կլինի նրանց համար: Հիշեք Տիրոջ խորհուրդը.«Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով, և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎԵՈՒ 42.14):

Առաջին դասից առաջ կարդացեք այս ձեռնարկը սկզբից մինչև վերջ, որպեսզի հասկանաք, թե ինչպես են նյութերը կապված միմյանց հետ: Յուրաքանչյուր դասը նախօրոք լավ պատրաստեք, որպեսզի հասկանք գաղափարները և ի վիճակի լինեք դրանք լավ ներկայացնել: Երբ ուսուցանում եք դասը, նախքան առաջ անցնելը, պարզեք՝ արդյո՞ք մասնակիցները լիովին հասկանում են գաղափարները: Մի շտապեք դասը վերջացնել: Եղեք համբերատար և թույլ տվեք մասնակիցներին մտածել ուղերձների վերաբերյալ և արձագանքել դրանց:

Յուրաքանչյուր դասից առաջ և դասի ընթացքում, ցանկացած ժամանակ հնարավորություն տվեք դասարանի անդամներին հարցեր տալ և քննարկել գաղափարներ: Օգնեք նրանց կիրառել այն սկզբունքները, որոնք նրանք սովորում են իրենց կյանքում: Պատասխանեք հարցերին՝ օգտագործելով սուրբ գրքերը, վերջին օրերի մարգարեների ուսմունքները և Տիրոջ Հոգու առաջնորդությունը:

Ողջ այս դասընթացի ընթացքում հիշեք տաճարային արարողությունների սրբազան բնույթը: Ինչպես նշվում է ներքոհիշյալ բացատրության մեջ, տաճարային աշխատանքի որոշ կողմեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

«Տաճարներից դուրս մենք չենք քննարկում տաճարային ծեսերը: Տաճարային ծեսերի մասին գիտելիքը երբեք չի նախատեսվել սահմանափակել միայն մի քանի ընտրյալների համար, որոնք պարտավորված կլինեն երաշխավորել, որ դրանց մասին ոչ ոք երբեք չի իմանա: Իրականում ճիշտ հակառակն է: Մեծ ջանասիրությամբ մենք կոչ ենք անում յուրաքանչյուր հոգու՝ արժանի դառնալ և նախապատրաստվել տաճարային փորձառության համար….

Տաճարի ծեսերը և արարողությունները պարզ են: Դրանք սքանչելի են: Դրանք սրբազան են: Դրանք գաղտնի են պահվում, որպեսզի չտրվեն նրանց, ովքեր պատրաստ չեն»: (Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար, էջ 2):

Աշխատեք զորացնել տաճարի վերաբերյալ ձեր սեփական վկայությունը և հաճախ վկայեք ձեր լսարանին այն սկզբունքների վերաբերյալ, որոնք դուք սովորեցնում եք: Հարմար պահին դասարանի անդամներին ևս հնարավորություն ընձեռեք՝ բերել իրենց վկայությունները:

Միշտ հիշեք տաճարային աշխատանքի կենսական կարևորությունը: Երեց Բոյդ Փակերն ասել է. «Արարողություններն ու ուխտերը դառնում են մեր լիազորագրերը Նրա ներկայության մեջ մտնելու համար: Ողջ կյանքի ձգտումը դրանք արժանիորեն ստանալն է. իսկ մահկանացու կյանքի փորձությունը՝ դրանք հետագայում պահելն է» (in Conference Report, Apr. 1987, 27; or *Ensign,* May 1987, 24):

1

ՏԱՃԱՐԸ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ Է ՓԻԿՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԾԻԱԳԻՐ ՄԱՍՐՆ

«Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստված. և նրան, որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին» (Հովհ ԺԷ.3):

ՆՊԱՏԱԿԸ

Օգնեք դասընթացի մասնակիցներին հասկանալ, որ տաճարում ուսուցանվում է փրկության ծրագիրը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Դասը սկսելուց առաջ գրատախտակի կամ պլակատի վրա պատրաստեք փրկության ծրագրի անավարտ սխեման (տես՝ էջ 3): (Ցանկության դեպքում կարող եք նմանատիպ անավարտ սխեմա պատկերել թղթի մի կտորի վրա՝ դասընթացի յուրաքանչյուր մասնակցի համար, դասի քննարկման ընթացքում այն լրացնելու համար):

2. Հավաստիացեք, որ դասընթացի յուրաքանչյուր մասնակից ունի սուրբ գրքի մի օրինակ: Ապահովեք նաև *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի մի օրինակ դասընթացի յուրաքանչյուր մասնակցի համար: Սրանք պետք է պատվիրվեն որպես դասարանական նյութերի մի մաս:

3. Կարող եք դասընթացի մի քանի մասնակիցների հանձնարարել օգնել ձեզ դասի երկրորդ մասի ընթացքում: Կարող եք տալ փրկության ծրագրի յուրաքանչյուր մասի (Նախամահկանացու կյանք, Անկում և այլն.) ներքևում նշված սուրբ գրքի հղումները դասընթացի մասնակիցներից որևէ մեկին և խնդրել նրան նախապատրաստված դասի գալ՝ ամփոփելու, թե այդ սուրբ գրվածքները ինչ են սովորեցնում փրկության ծրագրի մասին:

4. Եթե *Եկեք Ինձ մոտ* տեսաժապավենը (53146) մատչելի է, կարող եք ցուցադրել «Մարդու կողմից երջանկության որոնումը» 13-րոպեանոց հատվածը:

ԴԱՍԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

ՏԱՃԱՐԸ ՀՈԳԵԿՈՒ ԴՊԻՈՑ Է

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը:

Բացատրեք, որ սուրբ գրքերը կօգտագործվեն յուրաքանչյուր դասի ընթացքում: Հորդորեք դասընթացի մասնակիցներին ամեն դասին բերել սուրբ գրքերը:

Յուրաքանչյուր մասնակցի տվեք *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի մեկ օրինակ: Բացատրեք, որ այս գրքույկը դասընթացին կից հավելված է: Գրքույկում զետեղված նյութերը կքննարկվեն դասերի ընթացքում և յուրաքանչյուր դասընթացի մասնակից պետք է կարդա գրքույկը դասընթացի ուսուցման շաբաթների ընթացքում:

Դասը սկսեք բացատրելով, որ տաճարը հոգևոր դպրոց է, որն օգնում է մեզ ավելի շատ բան իմանալ կյանքի նպատակի և փրկության ծրագրի մասին:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ հետևյալ մեջբերումները, որոնք բացատրում են տաճարում սովորած մի քանի բաների մասին:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասում է, որ տաճարը «դառնում է Աստծո քաղցր և սրբազան բաների վերաբերյալ հրահանգավորման դպրոց: Այստեղ մեզ համար ուրվագծվում է բոլոր սերունդներին պատկանող Իր որդիների և դուստրերի համար սիրող Հոր ծրագիրը: Այստեղ մեր առջև ուրվանկարվում է նախամահկանացու գոյությունից այս կյանք և այս կյանքից դեպի հանդերձյալ կյանք մարդու հավերժական ճանապարհորդության ողիսականը: Այստեղ պարզ և հասարակ ձևով ուսուցանվում են սկզբունքային և մեծ կարևորություն ունեցող ճշմարտություններ բոլոր նրանց գիտակցության մեջ, ովքեր լսում են»: (“The Salt Lake Temple,” *Ensign*, Mar. 1993, 5–6).

Նախագահ Բրիգամ Յանգը սովորեցնում էր, որ օժտում կոչվող տաճարային արարողությունը մեզ հրահանգներ է տալիս, որոնք անհրաժեշտ են հավերժական կյանքի համար: «Ձեր օժտումը, իր մեջ ներառում է Տիրոջ տան բոլոր արարողությունների ստացումը, որոնք անհրաժեշտ են ձեզ, որպեսզի այս կյանքից հեռանալուց հետո, հնարավորություն ունենաք վերադառնալ Հոր ներկայության մեջ»: (*Discourses of Brigham Young*, sel. John A. Widtsoe [1954], 416).

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Հովհաննես ԺԷ.3

• Ի՞նչ է սովորեցնում սուրբ գրքի այս հատվածն այն ամենակարևոր գիտելիքի մասին, որը մենք կարող ենք ձեռք բերել:

Բացատրեք, որ տաճարում մենք կարող ենք ավելի շատ բան սովորել Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին և կարող ենք ավելի մոտենալ Նրանց: Մենք իմանում ենք մեզ համար Նրանց ծրագրի մասին, որը սուրբ գրքերում տարբեր անվանումներ են կրում, ինչպես օրինակ՝ փրկագնման կամ փրկության ծրագիր:

«Դրանով մենք կստուգենք նրանց՝ տեսնելու, թե նրանք կանեն բոլոր բաները, ինչ որ Տերը՝ նրանց Աստվածը կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.25).

• Մինչև այժմ ձեր կյանքում ի՞նչն է օգնել ձեզ իմանալ փրկության ծրագրի մասին:

• Ինչպե՞ս է փրկության ծրագրի մասին ձեր գիտելիքը օրհնել ձեր կյանքը:

ՏԱՃԱՐՈՒՄ ՄԵՋ ՈՒՍՈՒՑԱՆՎՈՒՄ Է ՓՐԿՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻԸ

Բացատրեք, որ փրկության ծրագրի ուսուցումը տաճարային օժտման մի մասն է կազմում: Դասի այս մասը դասընթացի մասնակիցներին կօգնի նախապատրաստվել հասկանալու այս ուսմունքները տաճարում:

Օգտագործեք գրատախտակի անավարտ պատկերը և օգտագործելով սուրբ գրվածքները կրկնեք անցած նյութը՝ օգնելով դասընթացի մասնակիցներին հասկանալ այդ գաղափարները: Սուրբ գրվածքների քննարկմանը համընթաց դրանք գրեք սխեմայի համապատասխան տողերի վրա (տես՝ ավարտուն սխեման 5-րդ էջում): Եթե դասընթացի մասնակիցներն ունեն սխեմայի իրենց

սեփական օրինակները, խնդրեք նրանց ավելացնել սուրբ գրքի հղումներն իրենց սխեմաների վրա:

Եթե դասընթացի մասնակիցներին հանձնարարել եք օգնել ձեզ, խնդրեք, որ նրանք ներկայացնեն փրկության ծրագրի վերաբերյալ իրենց նյութը: Բացատրեք, որ այդ քննարկումը կենտրոնացած կլինի հետևյալ հարցերի շուրջ: Որտեղի՞ց ենք մենք եկել: Ի՞նչու ենք այստեղ՝ երկրագնդի վրա: Ու՞ր ենք գնալու այս կյանքից հետո:



Նախամահկանացու կյանք

1. Մենք Աստծո՝ մեր Երկնային Հոր հոգևոր զավակներն ենք և երկիր գալուց առաջ մենք ապրում էինք Նրա հետ (տես՝ Հռովմայեցիս Ը. 16–17):

2. Երկնային Հայրը երկնքում մեծ խորհուրդ հրավիրեց (տես՝ Աբրահամ 3. 22–23): Նա մեր հավերժական զարգացման և երջանկության համար մի ծրագիր ներկայացրեց, որը կոչվում է փրկության ծրագիր: Մենք ընտրեցինք հետևել Նրա ծրագրին:

3. Համաձայն այդ ծրագրի Հիսուս Քրիստոսը՝ Երկնային Հոր Անդրանիկ Որդին կամավոր դարձավ մեր Փրկիչը (տես՝ Մովսես 4.2, Աբրահամ 3.27):

4. Լյուցիֆերը՝ Աստծո մյուս որդին, ապստամբեց Երկնային Հոր ծրագրի դեմ և «փնտրեց կործանել մարդու ազատ կամքը»: Նա իր հետևորդների հետ դուրս գցվեց երկնքից և զրկվեցին ֆիզիկական մարմին ստանալու և մահկանացու կյանքի փորձ ձեռք բերելու արտոնությունից: Բոլոր դարերի ընթացքում սատանան, ինչպես այժմ անվանում են Լյուցիֆերին, գայթակղելով փորձում է ողջ մարդկությանը իրեն նման թշվառ ու ամբարիշտ դարձնել (Տես՝ Մովսես 4.1, 3–4, 2 Նեփի 2.17–18):

Անկում

1. Ադամն ու Եվան ընտրվել էին լինելու Երկնային Հոր առաջին զավակները երկրի վրա և դրվեցին Եդէմական պարտեզում: Այդ ժամանակ նրանց մարմինները մահկանացու չէին (տես՝ Մովսես 3.7–8, 21–23):

2. Ադամն ու Եվան ընտրեցին ուտել այն պտղից, որն Աստված արգելել էր նրանց ուտել: Այդ պատճառով նրանք առանձնացվեցին Աստծո ներկայու-

թյունից: Այդ առանձնացումը կոչվում է հոգևոր մահ: Նրանք դարձան մահկանացու, որը նշանակում է, որ նրանց ֆիզիկական մարմիններն ի վերջո պետք է մահանային: Նրանք նաև ի վիճակի դարձան զավակներ ունենալ: Փոփոխությունը դեպի մահկանացու վիճակի կոչվում է Անկում (տես՝ 2 Նեփի 2.19–25, ՎևՈւ 29.40–41):

Մահկանացու կյանք

1. Բոլոր նրանք, ովքեր նախամահկանացու կյանքում ընտրում են հետևել Երկնային Հոր ծրագրին, ձեռք են բերում ֆիզիկական մարմին՝ ծնվելով այս երկրի վրա: Մեր մահկանացու կյանքի ընթացքում մենք ստուգվում ենք՝ տեսնելու արդյոք հոժա՞ր ենք ապրել հավատքով և հնազանդվել Երկնային Հոր պատվիրաններին, երբ Նրա ֆիզիկական ներկայությունից դուրս ենք գտնվում (տես՝ Ալմա 34.32, Աբրահամ 3. 24–26):

2. Մահկանացու կյանքի ընթացքում յուրաքանչյուր մարդ ազատ է ընտրելու՝ հետևել Աստծուն, թե սատանային (Տես՝ 2 Նեփի 2.27):

Մահ և հարություն

1. Երբ մենք մահանում ենք, մեր հոգիները մտնում են հոգիների աշխարհ, իսկ մեր մարմինները մնում են երկրի վրա: Այս առանձնացման ժամանակահատվածը շարունակվում է մինչև մեր հարության ժամանակը: Արդարների հոգիները ընդունվում են խաղաղության և երջանկության վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ: Ամբարիշտների հոգիները դրվում են մի վիճակում, որը երբեմն ակնարկվում է որպես բանտ (Ալմա 40. 9–14, տես նաև Ա Պետրոս Գ. 19):

2. Հիսուս Քրիստոսի Քավությունն ու Հարությունը ողջ մարդկության համար ուղի է ապահովում հաղթահարելու ֆիզիկական մահը հարություն առնելու միջոցով: Հարություն նշանակում է, որ մեր հոգիները և կատարյալ դարձված մարմինները կվերամիավորվեն հավերժության համար (տես՝ Ա Կորնթացիս ԺԵ. 22, 2 Նեփի 9.10–13, Ալմա 11.42–44):

3. Հիսուս Քրիստոսի Քավությունը մեզ համար նաև ուղի է ապահովում, որ ներում ստանանք, մաքրվենք մեղքից, որպեսզի կարողանանք բնակվել Աստծո ներկայության մեջ: Փրկիչը տառապեց ողջ մարդկության մեղքերի համար Գեթսեմանի պարտեզում և խաչի վրա: Նրա Քավության շնորհիվ մենք կարող ենք ապաշխարել մեր մեղքերից և ներում ստանալ: Երբ մենք ապրում ենք ըստ ավետարանի, մենք կարող ենք արժանի դառնալ ստանալու հավերժական կյանքի պարգևը և դառնալ Նրա նման (տես՝ Մոսիա 3. 5–12):

«Մենք հավատում ենք, որ Քրիստոսի Քավության շնորհիվ ողջ մարդկությունը կարող է փրկվել հնազանդվելով Ավետարանի օրենքներին ու արարողություններին» (Հավատո Հանգանակ 1.3):

Փառքի արքայություններ

Հարության ժամանակ յուրաքանչյուր անձ կարժանանա փառքի մի արքայության: Նրանք, ովքեր արդար են, կժառանգեն ավելի մեծ ուրախություն և օրհնություններ, քան նրանք, ովքեր չեն հնազանդվում Աստծո պատվիրաններին (տես՝ Ա Կորնթացիս ԺԵ. 35, 40–42):

1. Թելեստիալ փառքը նրանց համար է, ովքեր չեն ընդունում Հիսուս Քրիստոսի ավետարանը կամ Հիսուսի վկայությունը կամ Աստծո մարգարեներին և որոնք ապրում են մեղսալի կյանքով (տես՝ ՎԱՈ 76. 81–88, 98–103):
2. Թերեսթրիալ փառքը երկրի պատվավոր մարդկանց համար է, ովքեր խաբված են, և նրանց համար, ովքեր անվեհեր չեն եղել Հիսուս Քրիստոսի վկայության մեջ (տես՝ ՎԱՈ 76. 71–79):
3. Սելեստիալ փառքը պահված է նրանց համար, ովքեր հնազանդվում են պատվիրաններին և ստանում են արարողությունները, բոլոր բաները հաղթահարում են հավատքով առ Հիսուս Քրիստոս և դառնում են սրտով մաքուր (տես՝ ՎԱՈ 76. 50–70):

Խնդրեք դասընթացի մասնակիցներին պատասխանել հետևյալ հարցերին:

• Ի՞նչ սովորեցիք փրկության ծրագրի մասին, որը դուք առաջ չգիտեիք:

• Ի՞նչ եք դուք զգում, երբ մտածում եք այս մեծ ծրագրում Հիսուս Քրիստոսի դերի մասին:

• Ինչպե՞ս կարող եք ցույց տալ Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին, որ մենք երախտապարտ ենք Իրենց ծրագրի համար:

Փրկության ծրագրում Փրկչի Քավության վիթխարի կարևորությունը շեշտելու համար, գրեք հավատքի երրորդ հանգանակը լրացված սխեմայի ներքևում՝ ըստ ցույց տրված ձևի:

ԵԶԻԱՓԱԿՈՒՄ

Շեշտեք, որ տաճարը մեզ գիտելիք է տալիս այս ծրագրի վերաբերյալ, գիտելիք, որը մեծ օրհնություններ է բերում մեր կյանքում: Բերեք ձեր վկայությունն այն օրհնությունների վերաբերյալ, որ դուք ստացել եք փրկության ծրագիրը հասկանալու և ավետարանի սկզբունքներով ապրելու շնորհիվ:

Դուք կարող եք ավարտել՝ ցուցադրելով «Մարդու կողմից երջանկության որոնումը» տեսաժապավենը:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

«Մենք հավատում ենք, որ Քրիստոսի քավության շնորհիվ ամբողջ մարդկությունը կփրկվի հնազանդվելով Ավետարանի օրենքներին ու արարողություններին» (Հավատո Հանգանակ 1.3):

2

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՏԱՃԱՐ ՄՏՆԵԼՈՒ ԱՒԺԱՆՐ ԼՐՆԵՆՔ

«Իմ սրտի խորին ցանկությունն է, Եկեղեցու յուրաքանչյուր անդամի տաճարին արժանի տեսնել: Ես կուզենայի հուսալ, որ յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի կլինի և կկրի տաճարային ընթացիկ երաշխավորագիր»: (Նախագահ Հովարդ Վ. Հանթեր):

ՆՊԱՏԱԿԸ

Օգնել դասընթացի մասնակիցներին հասկանալ, որ նրանք պետք է արժանի լինեն մտնելու տաճար:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Նախքան այս դասը հրավիրեք եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին տեղեկություններ տալ տաճարային երաշխավորագիր ստանալու ընթացակարգի մասին: Դասի մատուցման համար անհրաժեշտ նյութերը գտնվում են «Տաճարային երաշխավորագիր ձեռք բերելու գործընթացը օրինություն է» բաժնի 10–11-րդ էջերում: Եթե եպիսկոպոսն ազատ չէ, կարող եք խնդրել նրա խորհրդականներից մեկին, որ ներկայացնի այդ ընթացակարգը:
2. Հետևյալ մեջբերումը գրեք գրատախտակին կամ պլակատի վրա. «Ես կոչ եմ անում Եկեղեցու բոլոր անդամներին՝ ապրել ավելի մեծ ուշադրություն դարձնելով Տեր Հիսուս Քրիստոսի կյանքի օրինակի վրա» (President Howard W. Hunter, in Conference Report, Oct. 1994, 7; or *Ensign,* Nov. 1994, 8):

ԴԱՍԸ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

Բացատրեք, որ նրանք, ովքեր պատրաստվում են տաճար մտնել, պետք է դրսևորեն իրենց հավատքն առ Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը՝ ապրելով ըստ ավետարանի և պահելով պատվիրանները: Նրանք պետք է բարոյապես մաքուր լինեն, վճարեն լրիվ տասանորդ, հնազանդվեն Իմաստության Խոսքին, հանգստության օրը սուրբ պահեն և ձգտեն արդարակյաց կյանք վարել: Նրանք նաև պետք է եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի և ցցի կամ միսիայի նախագահի մոտ հարցազրույց անցնեն և արժանի գտնվեն տաճարային երաշխավորագիր ստանալու համար: Այս դասին կքննարկվեն ավետարանական որոշ սկզբունքներ և պատվիրաններ, որոնցով պետք է ապրեն դասընթացի մասնակիցները, որպեսզի արժանիորեն այցելեն տաճար:

ՔԱՀՈՅԱԿԱՆ ՄԱՔԻՈՒԹՅՈՒՆ

Բացատրեք, որ Տերը և Նրա մարգարեները բազմիցս սովորեցրել են բարոյապես մաքուր լինելու մեծ կարևորության մասին: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին սովորեցնում է. «Մենք հավատում ենք մաքրաբարոյությանը ամուսնությունից առաջ և լիակատար հավատարմությանը ամուսնությունից հետո: Սա ամփոփում է ամեն ինչ: Սա է երջանիկ ապրելու ուղին: Սա է բավարարվածություն ունենալու ուղին: Այն բերում է խաղաղություն սրտին և խաղաղություն տանը» (in Conference Report, Oct. 1996, 68; or *Ensign,* Nov. 1996, 49):

Միասին կարդացեք հետևյալ սուրբ գրվածքները.

Վարդապետություն և Ուխտեր 42.22–24 (Տերը պատվիրել է մեզ սիրել մեր կողակցին և չձգտել որևէ մեկ ուրիշի, Նա պատվիրել է մեզ շնություն չանել):

Վարդապետություն և Ուխտեր 121:45 (Տերը պատվիրել է մեզ «թող առաքինությունը զարդարի [ձեր] մտքերն անդադար»):

Ա Տիմոթեոս Դ.12 (Մենք պետք է մաքրության օրինակներ լինենք):

1 Նեփի 10.21 (Ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո հետ):

Հավատո Հանգանակ 1.13 (Մենք հավատում ենք մաքրաբարո և առաքինի լինելուն):

• Ինչո՞ւ է Տերն այդպիսի մեծ շեշտ դնում բարոյական մաքրության վրա:

• Որո՞նք են անբարոյականության հետևանքները, որոնք մենք կարող ենք տեսնել մեզ շրջապատող աշխարհում: Որո՞նք են բարոյապես մաքուր կյանքով ապրելու որոշ օրհնությունները:

Դասընթացի մասնակիցների ուշադրությունը հրավիրեք գրատախտակի կամ պլակատի վրա գրված մեջբերման վրա (տես՝ դասի «Նախապատրաստություն» բաժինը):

• Ինչպե՞ս կարող է այս խորհուրդն օգնել մեզ և մեր զավակներին դիմադրելու աշխարհիկ գայթակղություններին և ապրելու բարոյապես մաքուր կյանքով:

ՏԱՍԱՆՈՒԴ

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 119.4:

Նշեք, որ Առաջին Նախագահությունը տվել է տասանորդի վերաբերյալ հետևյալ բացատրությունը. «Ամենապարզ բացատրությունը, որը մենք գիտենք, հենց Իր՝ Տիրոջ, կողմից տրված բացատրությունն է. այն է, որ Եկեղեցու անդամները պետք է վճարեն «իրենց տարեկան ամբողջ շահույթի մեկ տասներորդը, որն ըստ երևույթին ի նկատի ունի եկամուտը»: (First Presidency letter, 19 Mar. 1970) Տասանորդի ֆոնդերն օգտագործվում են ժողովատներ ու տաճարներ կառուցելու համար, միսիոներական աշխատանք իրականացնելու և երկրի վրա Աստծո արքայությունը կառուցելու համար:

Հաղորդեք Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստի հետևյալ միտքը.

«Տասանորդը մի սկզբունք է, որը սկզբունքային նշանակություն ունի ողջ աշխարհի թե հարուստ թե աղքատ Եկեղեցու անդամների բարօրության և անձնական երջանկության համար: Տասանորդը զոհաբերության սկզբունք է և երկնքի պատուհանները բացելու բանալի…. Եկեղեցու այն անդամները, որոնք չեն վճարում տասանորդ, չեն կորցնում անդամությունը. նրանք կորցնում են միայն իրենց օրհնությունները» (in Conference Report, Oct. 1998, 73–74; or *Ensign*, Nov. 1998, 58–59):

Դասընթացի մասնակիցների հետ վերանայեք հետևյալ սուրբ գրվածքները:

Ղևտացոց ԻԵ.30 (Տասանորդը Տիրոջն է, այն սուրբ է Տիրոջ համար):

Մաղաքիա Գ.8–11 (Մենք կողոպտում ենք Աստծուն, երբ հրաժարվում ենք վճարել մեր տասանորդը, Աստված առատորեն կօրհնի նրանց, ովքեր տասանորդ են վճարում):

• Ի՞նչ օրհնություններ եք ստացել տասանորդ վճարելու շնորհիվ:

• Ինչո՞ւ ենք մենք կողոպտում Աստծուն, երբ հրաժարվում ենք տասանորդ վճարել (Տես՝ ՎևՈւ 104.14):

Բացատրեք, որ ամեն տարի անդամներին խնդրվում է հանդիպել իրենց եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ տասանորդի կարգավորման համար և նրան հայտնել, թե արդյոք լրիվ տասանորդ վճարում են, թե ոչ: Այս հանդիպումը հնարավորություն է ընձեռում անդամներին գնահատել, թե որքան լավ են նրանք կատարում այս կարևոր պատվիրանը:

ԻՄԱՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ

Բացատրեք, որ տաճար մտնելուց առաջ, Տերը սպասում է մեզանից, որ մենք ազատվենք այն սովորույթներից, որոնք դարձնում են մեր կյանքը թե հոգեպես, թե ֆիզիկապես անմաքուր և անառողջ:

Կարդացեք որոշ հատվածներ կամ ամբողջովին հետևյալ սուրբ գրվածքներից:

Ա Կորնթացիս Գ.16–17 (Մեր մարմինները Աստծո տաճարներ են և չպետք է պղծվեն):

Վարդապետություն և Ուխտեր 89 (Այս հայտնությունը հայտնի է որպես Իմաստության Խոսք: 1–9 հատվածներում խոսվում է այն բաների մասին, որոնք մենք չպետք է մեր մարմինների մեջ ընդունենք, 10–17 հատվածներում խոսվում են այն բաների մասին, որոնք լավ են մեր մարմինների համար, 18–21 հատվածներում նկարագրվում է Տիրոջ խոստումները նրանց, ովքեր պահում են Նրա պատվիրանները):

• Այսօր աշխարհում ինչպիսի՞ բաներ են ազդում մեզ վրա՝ դրդելով խախտել Իմաստության Խոսքում մեզ տրված պատվիրանները:

• Ինչպե՞ս կարող ենք օգնել ինքներս մեզ և մեր երեխաներին՝ պահելու Տիրոջ առողջության օրենքները:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 29.34:

• Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս կարող է Իմաստության Խոսքին հնազանդվելը հոգեպես և ֆիզիկապես օրհնել մեզ:

• Որո՞նք են «իմաստության մեծ գանձերից» (ՎԵՈՒ 89.19) մի քանիսը, որոնք մենք կարող ենք ստանալ՝ պահելով այս պատվիրանները:

Հաղորդեք Նախագահ Բոյդ Ք.Փակերի հետևյալ միտքը:.

«Այն, ինչ դուք սովորում եք հոգեպես, ինչ որ չափով կախված է այն բանից, թե դուք ինչպես եք վերաբերվում ձեր մարմնին: Ահա թե ինչու է Իմաստության Խոսքն այդքան կարևոր:

Սովորություն առաջացնող այնպիսի նյութեր, ինչպիսիք են՝ թեյը, սուրճը, ոգելից խմիչքները, ծխախոտը, ճիշտ այնպես, ինչպես կախվածություն առաջացնող մյուս թմրադեղերը, խանգարում են հոգևոր նուրբ հաղորդակցութանը:

«Մի անտեսեք Իմաստության Խոսքը, քանզի այն կարող է ձեզանից խլել «գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր», որոնք խոստացվում են նրանց, ովքեր պահում են այն: Իսկ լավ առողջությունը հավելյալ օրհնություն է» (in Conference Report, Oct. 1994, 78; or *Ensign*, Nov. 1994, 61):

ՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Միասին կարդացեք Ելից Ի. 8–11:

Բացատրեք, որ Տիրոջ ժողովրդին միշտ պատվիրվել է Հանգստության օրը սուրբ պահել: Տերը մեծ օրհնություններ է խոստացել նրանց, ովքեր կանեն այդ:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 59.9–13:

• Որո՞նք են Հանգստության օրը սուրբ պահելու Տիրոջ կողմից տրված հիմնական պատճառները:

• Հանգստության օրը սուրբ պահելիս ինչպե՞ս կարող է մեզ առաջնորդել Վարդապետություն և Ուխտերի 59.9–13 հատվածները:

• Որո՞նք են այն օրհնություններից մի քանիսը, որոնք խոստացված են նրանց, ովքեր ճշտորեն կպահեն Հանգստության օրը:

Որպես այս քննարկման մի մաս հաղորդեք Երեց Ջեյմս Ի. Ֆաուստի կողմից ուսուցանվող հետևյալ սկզբունքները:

«Ինչու՞ է Աստված խնդրել մեզ Հանգստության օրը սուրբ պահել: Կարծում եմ պատճառներն առնվազն երեքն են: Առաջինը կապված է ֆիզիկական հանգստի և ուժերի վերականգման անհրաժեշտության հետ ….

Երկրորդը, իմ կարծիքով, շատ ավելի մեծ կարևորություն ունի: Այն կապված է մեր հոգևոր անձի վերածննդի և զորացման անհրաժեշտության հետ….

«Երրորդ պատճառը թերևս երեքից ամենակարևորն է: Այն կապված է, որպես Աստծո հանդեպ մեր սիրո արտահայտություն պատվիրաններին հնազանդ լինելու հետ: Օրհնված են նրանք, ովքեր Փրկչի պատվիրանները պահելու համար որևէ այլ պատճառի կարիք չունեն, բացի Նրա հանդեպ սիրուց» (in Conference Report, Oct. 1991, 46–47; or *Ensign*, Nov. 1991, 35):

• Որո՞նք են այն օրհնությունները, որոնք ձեր կյանք են մտել Հանգստության օրը սուրբ պահելու շնորհիվ:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին հանձն առնել ապրել ըստ այդ օրը քննարկված պատվիրանների՝ ըստ բարոյական մաքրության, տասանորդի, Իմաստության Խոսքի և հանգստության օրը սուրբ պահելու պատվիրանների: Այդ ժամանակ նրանք ավելի լավ նախապատրաստված կլինեն գնալու տաճար և ավելի առատորեն կստանան Տիրոջ օրհնությունները:

ՏԱՃԱՐԱՅՐՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՀԱՄԱՐ ԲԵՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ Է

Բացատրեք, որ տաճար գնալուց առաջ անդամներից յուրաքանչյուրը պետք է արժանի գտնվի տաճարային երաշխավորագիր ստանալու համար: Ինչպես բացատրված է հետևյալ դրույթում՝ այդ երաշխավորագիրը ձեռք բերելու գործընթացը կարող է օրհնել յուրաքանչյուր անձի կյանքը:

«Եպիսկոպոսը պատասխանատվություն է կրում մեր անձնական արժանավորությունը ստուգելու համար պարզաբանող հարցեր տալ: Այդ հարցազրույցը չափազանց կարևոր է որպես Եկեղեցու անդամ ձեզ համար, քանի որ դա հնարավորություն է տալիս Տիրոջ կարգված ծառայի օգնությամբ քննել ձեր կյանքի ուղղությունը: Եթե ձեր կյանքում որևէ բան ճիշտ չի ընթանում, եպիսկոպոսը կօգնի շտկել դա: Այս գործընթացի միջոցով, երբ դուք խորհրդակցում եք Իսրայելի դատավորի հետ, դուք կարող եք հայտարարել ձեր արժանավորության մասին կամ օգնություն ստանալ, որպեսզի արժանի դառնաք մտնելու տաճար Տիրոջ համաձայնությամբ: (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար*, 3):

«Ես. . . Եկեղեցու անդամներին կոչ եմ անում հաստատել Տիրոջ տաճարը որպես իրենց անդամության մեծ խորհրդանիշ և իրենց ամենասրբազան ուխտերի աստվածային հիմք» (Նախագահ Հովարդ Վ. Հանթեր):

Բացատրեք, որ եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը և ցցի կամ միսիայի նախագահը հարցազրույց են անցկացնում բոլոր նրանց հետ, ովքեր առաջին անգամ տաճարային երաշխավորագիր են ստանում և նրանց հետ, ովքեր ծրագրում են ամուսնանալ տաճարում: Եպիսկոպոսի և ցցի նախագահության խորհրդականները կարող են հարցազրույց անցկացնել նրանց հետ, ովքեր ցանկանում են նորացնել իրենց տաճարային երաշխավորագիրը:

Դասի այս մասում խնդրեք եպիսկոպոսին, ճյուղի նախագահին կամ եպիսկոպոսի խորհրդականներից մեկին ներկայացնել տաճարային երաշխավորագրեր ստանալու ընթացակարգը: Նա չպետք է խմբի ներկայությամբ կարդա հարցազրույցի իսկական հարցերը, բայց կարող է գաղափարներ ներկայացնել, թե ինչ կարող են ակնկալել դասընթացի մասնակիցները տաճարային երաշխավորագրի համար հարցազրույց անցնելիս: Հետևյալ դրույթները կարող են ծառայել որպես ուղեցույց.

Տաճարային երաշխավորագրի ձգտող անդամները պետք է վկայություն ունենան Երկնային Հոր, Տեր Հիսուս Քրիստոսի և Սուրբ Հոգու մասին: Նրանք պետք է սատարեն Տիրոջ մարգարեին, Բարձրագույն Իշխանության մյուս ներկայացուցիչներին և Եկեղեցու իրենց տեղական ղեկավարներին: Նրանք չպետք է համակրեն կամ միանան այն խմբերին կամ անհատներին, ովքեր ուրացել են Եկեղեցին կամ որոնց ուսմունքներն ու արարքները ավետարանին հակառակ են:

Երաշխավորագրի ձգտող անդամները պետք է հավատարմորեն հաճախեն հաղորդության ժողովների, քահանայության ժողովների և եկեղեցական մյուս ժողովների: Նրանք պետք է բարեխղճորեն կատարեն քահանայության իշխանությամբ իրենց տրված կոչումները: Նրանք պետք է ձգտեն պահել Տիրոջ բոլոր պատվիրանները, այդ թվում լրիվ տասանորդի վճարումը, խոսքով և գործով ազնիվ լինելը և թեյ, սուրճ, ալկոհոլ, ծխախոտ, և այլ վնասակար և կախվածություն առաջացնող նյութերի օգտագործումից ձեռնպահ մնալը:

Նրանք պետք է ապրեն մաքուր և առաքինի կյանքով և պետք է հնազանդվեն Տիրոջ մաքրաբարոյության օրենքին, որն արգելում է սեռական հարաբերություններ որևէ այլ անձի հետ բացի կողակցից, որի հետ նրանք օրինական ամուսնացած են: Իրենց ընտանիքի մյուս անդամների հետ նրանց հարաբերությունները թե հոգևոր թե ֆիզիկական, պետք է ներդաշնակ լինեն ավետարանի սկզբունքներին: Նրանք չպետք է ներգրավված լինեն ուրիշների հանդեպ որևէ հոգևոր, ֆիզիկական, մտավոր կամ զգացմունքային բռնության մեջ:

Նրանք պետք է պատրաստակամ լինեն խոստովանել իրենց մեղքերը և թողնել դրանք: Այնպիսի լուրջ մեղքեր ինչպիսիք են՝ բարոյական օրինազանցությունը, բռնությունը ընտանիքի որևէ անդամի հանդեպ, ուրացած խմբերին և արարքներին միանալը կամ երկրի օրենքների լուրջ խախտումները պետք է խոստովանել եպիսկոպոսին կամ ճյուղի նախագահին տաճարային երաշխավորագրի հարցազրույցից շատ առաջ: Եթե տվյալ անձնավորության խիղճը, որը բոլոր մարդկանց տրված Քրիստոսի լույսն է, ինչ-որ հարց է բարձրացնում մարդու մտքում, թե արդյոք տվյալ հարցը պե՞տք է քննարկվի եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի հետ, հավանաբար այն պետք է քննարկել:

Նախքան տաճարային երաշխավորագիր ձեռք բերելը, նրանք, ովքեր ամուսնալուծված են, հնարավոր է եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի և ցցի կամ միսիայի նախագահի կողմից պարզաբանման կարիք ունենան: Նրանք պետք է միշտ կատարեն ամուսնալուծության վճռի համաձայնագրի կետերը, ներառյալ՝ ընտանիքին օժանդակող վճարումները ճիշտ ժամանակին կատարելը:

Տաճարային երաշխավորագրի ձգտող անդամները եպիսկոպոսի կամ ճյուղի նախագահի կողմից հարցազրույց անցնելուց հետո, պետք է հարցազրույց անցնեն ցցի նախագահության որևէ անդամի կամ միսիայի նախագահի կողմից: Ոմանց կարող է հետաքրքրել, թե ինչու է դա անհրաժեշտ: Երբ ձգտում ենք տաճարային երաշխավորագիր ձեռք բերել, մենք փաստորեն ձգտում ենք ստանալ Տիրոջ թույլտվությունը տաճար մտնելու համար: Մենք արտոնություն ունենք հաստատելու մեր արժանավորությունը երկու վկաների առջև, որոնք Տիրոջ լիազորված ծառաներն են: Մեզ համար օրհնություն է՝ հաստա-

տել Տիրոջ ծառաների առջև մեր արժանավորությունը սուրբ տաճար մտնելու համար:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Շեշտելու համար տաճար գնալու արժանի լինելու և միշտ ընթացիկ տաճարային երաշխավորագիր կրելու կարևորությունը, կրկնեք Նախագահ Հովարդ Վ. Հանթերի միտքը:

«Ես. . . կոչ եմ անում Եկեղեցու անդամներին հաստատել Տիրոջ տաճարը որպես իրենց անդամության մեծ խորհրդանիշ և իրենց ամենասրբազան ուխտերի աստվածային հիմք: Իմ սրտի խորին ցանկությունն է, Եկեղեցու յուրաքանչյուր անդամի տաճարին արժանի տեսնել: Ես կուզենայի հուսալ, որ յուրաքանչյուր չափահաս անդամ արժանի կլինի և կկրի ընթացիկ տաճարային երաշխավորագիր, եթե նույնիսկ տաճարից հեռու գտնվելը թույլ չի տալիս այն անմիջապես կամ հաճախ օգտագործել» (quoted in Jay M. Todd, “President Howard W. Hunter,” *Ensign,* July 1994, 5).

Վկայություն բերեք այն օրհնությունների վերաբերյալ, որոնք ստացել եք ձեր կյանքում, երբ արժանի եք ապրել տաճար գնալու համար:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

3 ՏԱՃԱՐԱՅՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿՅԱՆՔՈՒՄ ՄԵԾ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ԲԵՐՈՒՄ

«Եվ մենք խնդրում ենք քեզ, Սուրբ Հայր, որ քո ծառաները կարողանան դուրս գալ այս տնից քո զորությամբ զինված և քո անունը լինի նրանց վրա և քո փառքը պարուրի նրանց» (ՎԱՌ 109.22):

ՆՊԱՏԱԿԸ

Օգնել դասընթացի մասնակիցներին հասկանալ, որ նրանք, ովքեր արժանիորեն են այցելում տաճար, մեծ օրհնություններ կստանան Տիրոջից:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Ուշադիր վերանայեք այս դասում օգտագործվող սուրբ գրվածքները, որպեսզի պատրաստ լինեք առաջնորդել դրանց քննարկումը դասարանում:
2. Դուք կարող եք նախապատրաստել դասընթացի մասնակիցներին երգելու օրհներգ ճշմարտության հավերժական բնույթի մասին, օրինակ՝ «Ճշմարտությունը» *(Հիմներ և մանկական երգեր, էջ 31):*
3. Եթե Ընտանեկան երեկո տեսաժապավենի հավելվածը (Միջազգային) (5X736) մատչելի է, կարող եք ցուցադրել «Տաճարները հավերժական ուխտերի համար են» վեց րոպեանոց հատվածը:

ԴԱՍԸ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

ՏԱՃԱՐԱՅՐՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՆԱԴԱՀՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՍԿՍԱԾ

Դուք կարող եք սկսել՝ միասին երգելով օրհներգ տաճարային աշխատանքի կամ ճշմարտության հավերժական բնույթի մասին:

Բացատրեք, որ Տերը միշտ պատվիրել է Իր ժողովրդին տաճարներ կառուցել: Նա հայտնի է դարձրել այն աշխատանքը, որ պետք է արվի տաճարներում:

- Ի՞նչ տաճարներ կամ խորաններ են հիշատակվում սուրբ գրքերում:

Առաջարկեք դասընթացի մասնակիցներին աչքի անցկացնել սուրբ գրքերի թեմաների ցանկը՝ գտնելու տաճարներին և խորաններին վերաբերող հղումները: Դուք կարող եք դասընթացի մասնակիցների պատասխանները գրի առնել գրատախտակին: Կարող եք նաև խնդրել դասընթացի մասնակիցներին աչքի անցկացնել սուրբ գրքերի հետևյալ հատվածները.

Մովսեսի խորանը՝ Ելից Խ.1–2, 34–38

Սողոմոնի տաճարը՝ Բ Մնացորդաց Գ.1–2; Ե.1

Հերովդեսի տաճարը՝ Մատթեոս ԻԱ.12–15

Նեփիացիների տաճարները՝ 2 Նեփի 5.16, Մոսիա 1.18, 3 Նեփի 11.1

Բացատրեք, որ ուրացության պատճառով բոլոր այս տաճարները ի վերջո կորցրեցին իրենց իսկական նպատակը և ավերվեցին: Տաճարային աշխատանքը իր լրիվությամբ վերականգվել է մեր օրերում՝ մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով, մեր կյանք բերելով մեծ օրհնություններ:

Երեց Բրյուս Ռ. Մակ Քոնքին ասել է. «Տաճարների ոգեշնչված կառուցումն ու ճիշտ օգտագործումը Տիրոջ աշխատանքի աստվածայնության ամենամեծ ապացույցն է.... Այնտեղ, որտեղ կան տաճարներ, որտեղ հայտնության հոգին հանգչում է նրա ներսում ծառայողների վրա, այնտեղ կգտնվի Տիրոջ ժողովուրդ. այնտեղ, որտեղ այս բաները չկան, չկա ոչ Եկեղեցի, ոչ թագավորություն, ոչ էլ երկնքի ճշմարտություն» (*Mormon Doctrine,* 2nd ed. [1966], 781):

ՄԵԾ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԽՈՍՏԱՑՎԱԾ ՆԻԱՆՑ, ՈՎՔԵՐ ԱՐԺԱՆՐՈՒԵՆ ԵՆ ՏԱՃԱՐ ԱՅՑԵԼՈՒՄ

Տաճարը կամ Տիրոջ տունը այն տեղն է, ուր մենք գնում ենք սելեստիալ արքայությունում վեհացում ստանալուն նախապատրաստվելու: Այնտեղ մենք ավելի շատ բան ենք սովորում Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի մասին: Մենք ուխտեր ենք կապում Նրանց հետ և Նրանք մեզ խոստանում են հրաշալի օրհնություններ:

Վարդապետություն և Ուխտերում Տերը նկարագրել է այդ օրհնություններից մի քանիսը, որոնք ստանում են նրանք, ովքեր տաճար են հաճախում և արժանի ապրում այն ուխտերին, որոնք նրանք կապել են այնտեղ: Այդ օրհնություններից մի քանիսը նկարագրված են 109 բաժնում, որը Կիրթլենդի տաճարի նվիրագործման աղոթքն է: Այս աղոթքի բառերը հայտնությամբ էին տրվել Ջոզեֆ Սմիթին:

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է, որ այս աղոթքի «պատասխանը շարունակում է գալ մեզ վրա, որպես անհատներ, մեզ վրա, որպես ընտանիքներ, մեզ վրա, որպես ժողովուրդ, քահանայության զորության շնորհիվ, որը Տերը մեզ է տվել, Իր սուրբ տաճարներում օգտագործելու համար» (“The Great Symbol of Our Membership,” *Ensign,* Oct. 1994, 4):

Այնուհետև Նախագահ Հանթերը մեջ է բերել 109 բաժնի մի քանի հատվածներ: Դասընթացի մասնակիցներին խնդրեք ընթերցել այդ հատվածները՝ Վարդապետություն և Ուխտեր 109. 10–12, 22–23, 59, 67, 72, 75: Խնդրեք նրանց ձգտել Տիրոջ կողմից հիշատակված օրհնություններին:

Ընթերցանությունից հետո, դասընթացի մասնակիցներին խնդրեք հերթով գրել այն օրհնությունները, որոնք նրանք նշել են: Գրատախտակին գրեք մեկնաբանությունները: Նշված օրհնությունները կարող են ներառել հետևյալը.

1. Տիրոջ փառքը կլինի Նրա ժողովրդի վրա
2. Տիրոջ ծառաները դուրս կգան տաճարից Տիրոջ զորությամբ, անունով և փառքով և հրեշտակները կպաշտպանեն նրանց:
3. Տիրոջ ծառաները տաճարից կտանեն ավետարանի ճշմարտությունը մինչև երկրի ծայրերը:
4. Ցցեր կկազմավորվեն, որպեսզի Տիրոջ ժողովուրդը կարողանա հավաքվել:
5. Ողջ ցրված Իսրայելը կսովորի ճշմարտությունը և կցնծա:
6. Սրբերի ընտանիքները և բոլոր նրանց հիվանդներն ու տառապյալները կհիշվեն Տիրոջ առաջ:
7. Տիրոջ թագավորությունը կլցնի ողջ երկիրը:
8. Տիրոջ ծառաները մի օր կհափշտակվեն վեր՝ դիմավորելու Տիրոջը և Նրա հետ կլինեն հավերժ:

«Այո, իմ ներկայությունը պիտի լինի [իմ տանը], քանզի ես կմտնեմ այնտեղ և բոլոր սրտով մաքուրները, որոնք կմտնեն այնտեղ, պիտի տեսնեն Աստծուն» (ՎԱՈ 97.16):

• Ի՞նչ եք զգում, երբ մտածում եք այս հրաշալի օրհնությունների մասին, որոնք խոստացվել են նրանց, ովքեր տաճար են հաճախում արժանիորեն և հարգում են իրենց ուխտերը:

Նախագահ Հովարդ Վ. Հանթերն ասել է. «Երբևիցէ եղե՞լ է մի ժողովուրդ, որն այդպիսի ոգեշնչող և հրաշալի խոստումներ է ունեցել: Զարմանալի չէ, որ Տերը ցանկանում է, որ Նրա հետևորդներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն Իր օրինակի և Իր տաճարների վրա» (*Ensign*, Oct. 1994, 5):

Տերը տաճարի հետ կապված խոստումներ է տվել նաև Վարդապետություն և Ուխտեր 97-րդ բաժնում: Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 97.15–21:

• Ի՞նչ են սովորեցնում 15–17 հատվածները, որոնք պետք է անի Տիրոջ ժողովուրդը, որպեսզի արժանանա Տիրոջ օրհնություններին Իր տաճարներում: (Լինել սրտով մաքուր և թույլ չտալ որևէ անմաքուր բան մտնի տաճար):

Բացատրեք, որ նրանք, ովքեր մաքուր են սրտով, կոչվում են Սիոն: 15–21 հատվածները սովորեցնում են, որ մենք կարող ենք օգնել Սիոնի կառուցմանը արժանիորեն հաճախելով տաճար և ձգտելով լինել սրտով մաքուր և չարից անապական:

• Այս հատվածներում ի՞նչ օրհնություններ են խոստացվում այն ժողովրդին, որն արժանի կլինի կոչվելու Սիոն:

Բացատրեք, որ հին ժամանակներում գոյություն է ունեցել Սիոն անունով քաղաք: Այս քաղաքը կառուցվել էր Ենովք մարգարեի ու նրա ժողովրդի կողմից: Այն վերցվեց երկինք դրա ժողովրդի արդարության շնորհիվ (տես՝ ՎԱՈ 38.4, Մովսես 7. 18–21, 69):

Սիոնը գոյություն կունենա նաև Վերջին օրերին: Հավատո տասներորդ հանգանակում Տերը խոստանում է, որ Սիոն անունով մի քաղաք կկառուցվի Ամերիկյան մայրցամաքում: Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ

հավատո հանգանակի այս կետը: Բացատրեք, որ Իսրայելի ցրված ժողովուրդը կհավաքվի այս մեծ քաղաքում (տես՝ ՎԵՈՒ 103. 11–13):

Այսօր Եկեղեցու անդամներին խորհուրդ է տրվում արժանի դառնալ սուրբ տաճար հաճախելու և կառուցելու Սիոնը, որտեղ էլ որ նրանք ապրելիս լինեն աշխարհում: Մենք պետք է մեր տները դարձնենք տաճարների պես՝ մաքրության, սիրո և անձնական հայտնության վայրեր:

- Ի՞նչ կարող ենք անել սրտով ավելի մաքուր դառնալու համար:
- Ի՞նչ ուղիներով է երբեմն աշխարհը դժվարացնում սրտով մաքուր մնալը:
- Ինչպես կարող եք ձեր ընտանիքին, ճյուղին, կամ ծխին օգնել սրտով մաքուր դառնալ:

Բացատրեք, որ նրանք, ովքեր տաճարային ուխտեր են կապում և պահում այդ ուխտերը և իրենց ողջ կյանքի ընթացքում ձգտում են դառնալ սրտով մաքուր, այդ նրանք են, որ կարող են օգնել կառուցելու Սիոնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ

Բերեք ձեր վկայությունը, որ նրանք, ովքեր արժանիորեն տաճար են հաճախում, կստանան մեծ օրհնություններ Տիրոջից, ներառյալ Սիոնի ժողովուրդը լինելու օրհնությունը: Մենք պետք է անենք այն ամենը, ինչ կարող ենք, այդ օրհնություններին արժանի լինելու և սրտով մաքուր դառնալու համար:

Դուք կարող եք ցուցադրել «Տաճարները հավերժական ուխտերի համար են» տեսաժապավենը:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

4 ՏԱՃԱՌԱՅՐՆ ԱՌԱՌՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՐ ԵՎ ՈՒԽՏԵՐԻՐ ՍՏԱՑՈՒՄ

«Առանց նրա արարողությունների և քահանայության իշխանության աստվածայնության զորությունը չի բացահայտվում մարդկանց, որ մարմնում են» (ՎԱՌ 84.21):

ՆՊԱՏԱԿ Ը

Օգնել դասընթացի մասնակիցներին հասկանալ տաճարային արարողությունների և ուխտերի կարևորությունը:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Եթե ձեր տարածաշրջանում մատչելի է *Introductory Gospel Messages* (5X196) տեսաժապավենը կարող եք ցույց տալ այն: Ցուցադրումը տևում է մոտավորապես 27 րոպե:

ԴԱՍԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը:

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

ՏԱՃԱՌՈՒՄ ՄԵՆՔ ՍՏԱՆՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՌՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԿԱՊՈՒՄ ՈՒԽՏԵՐ

Բացատրեք, որ տաճարում մենք ստանում ենք արարողություններ, որոնք մեզ կօգնեն վերադառնալ Աստծո ներկայության մեջ: Մենք նաև ուխտեր ենք կապում ապրել ըստ ավետարանի օրենքների: Հետևյալ նյութը կապահովի ընդհանուր տեղեկություններ արարողությունների և ուխտերի վերաբերյալ, իսկ ավելի մանրամասն տաճարային արարողությունների և ուխտերի վերաբերյալ:

Արարողություններ

Բացատրեք, որ արարողությունը սուրբ ծիսակատարություն է, որը հոգևոր նշանակություն և ազդեցություն ունի:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին անվանել Եկեղեցու արարողություններից մի քանիսը: (Նրանք կարող են նշել երեխաների անվանակոչումը և օրհնությունը, մկրտությունը, հաստատումը, հաղորդությունը, քահանայության կարգումը և տաճարային արարողությունները):

Բացատրեք, որ քահանայության իշխանությամբ կատարված արարողությունները կարևոր են մեր վեհացման համար: Այդ արարողությունների միջոցով է, որ մենք ստանում ենք Աստծո զորությունը մեր կյանքում:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 84. 19–21:

• Ի՞նչ է անհրաժեշտ, որպեսզի աստվածայնության զորությունը բացահայտվի մեր կյանքում: (Մելքիսեդեկյան Քահանայության արարողությունները: Այս հատվածներում հիշատակվող «մեծագույն քահանայությունը» վերաբերում է Մելքիսեդեկյան Քահանայությանը):

«Մենք ուխտ ենք կապում տալ մեր միջոցներից՝ մեր ժամանակից, մեր փողից և մեր շնորհներից, այն ամենից ինչ ենք և այն ամենից ինչ ունենք երկրի վրա Աստծո արքայության կառուցման համար» (Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար էջ 35):

Խնդրեք դասընթացի մասնակիցներին բացել *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի 29-րդ էջը: Խնդրեք դասընթացի մասնակիցներից մեկին կարդալ հետևյալ միտքը.

« Որպես Եկեղեցու անդամներ, որքանո՞վ են կարևոր արարողությունները մեզ համար»:

«Կարո՞ղ եք երջանիկ լինել, կարո՞ղ եք փրկագնվել, կարո՞ղ եք վեհանալ առանց դրանց: Պատասխան. Դրանք ավելին են քան հանձնարարելի կամ ցանկալի կամ նույնիսկ անհրաժեշտ լինելը: Նույնիսկ ավելի են, քան էական կամ կենսական լինելը: Դրանք վճռորոշ են մեզանից յուրաքանչյուրի համար»:

Ուխտեր

Շեշտեք, որ ուխտը սրբազան համաձայնություն է Աստծո և մարդու կամ մի խումբ մարդկանց հետ: Աստված դնում է որոշակի պայմաններ և Նա խոստանում է օրհնել մեզ, եթե մենք հնազանդվենք այդ պայմաններին: Երբ մենք ընտրում ենք չպահել ուխտերը, մենք չենք կարող ստանալ օրհնություններ և որոշ դեպքերում ի հետևանք մեր անհնազանդության մենք պատիժ ենք կրում: Քահանայության փրկարար արարողությունները միշտ ուղեկցվում են ուխտերով:

• Ձեր կյանքում մինչև այժմ ի՞նչ ուխտեր եք կապել Տիրոջ հետ: (Դասընթացի մասնակիցները կարող են նշել մկրտության ուխտը, որը յուրաքանչյուր անգամ վերանորոգվում է, երբ մենք վերցնում ենք հաղորդությունը):

• Երբ մկրտվում ենք, ի՞նչ ուխտեր ենք կապում: (տես՝ Մոսիա 18.8–10, ՎԼՈ 20.37):

Շեշտեք, որ երբ մենք ուխտեր ենք կապում Աստծո հետ, մենք արտահայտում ենք Աստծուն ծառայելու մեր ցանկությունը և մեր հոժարակամությունը հնազանդվելու այն ամենին, ինչ կխնդրվի մեզանից: Փոխարենը Աստված խոստանում է մեզ բազմաթիվ հրաշալի օրհնություններ: Մենք պետք է կապենք և պահենք ուխտեր, որպեսզի առաջ ընթանանք դեպի հավերժական կյանք:

Տաճարային արարողություններ և ուխտեր

Բացատրեք, որ տաճարային արարողությունները ներառում են՝ օժտումները և կնքումները (տաճարային ամուսնությունը և երեխաներին ծնողների հետ կնքումը) ինչպես ողջերի այնպես էլ մահացածների համար: Ինչպես քահանայության մյուս արարողությունները, մահացածների համար մկրտության արարողությունը ևս կատարվում է տաճարներում: Տաճարային արարողությունների ժամանակ մենք հանդիսավոր ուխտեր ենք կապում նվիրվելու Աստծուն և օգնելու երկրի վրա Նրա արքայության կառուցմանը:

Երեց Ջեյմս Ի. Թալմիջն, այսպես է ասել այն ուխտերի վերաբերյալ, որոնք մենք կապում ենք օժտման ժամանակ.

Օժտման արարողությունները իրենց մեջ ներառում են տվյալ անձնավորության կողմից որոշակի պարտավորություններ, ինչպիսիք են՝ առաքինության և մաքրաբարոյության օրենքը խստորեն պահպանելու ուխտը, գթառատ, բարեգործ, հանդուրժող և անարատ լինելու խոստումը, տաղանդն ու նյութական միջոցները ճշմարտության տարածման և մարդկային ցեղի ազնվացման նպատակին նվիրաբերելը, ճշմարտության գործին նվիրվածության պահպանումը, և ամեն կերպ մեծ նախապատրաստությանը մասնակցելու ձգտումը, որպեսզի երկիրը կարողանա պատրաստ լինել ընդունելու իր Արքային՝ Տեր Հիսուս Քրիստոսին: Յուրաքանչյուր ուխտի և դրա հետ կապված պարտավորության ընդունման հետ միասին ասվում է խոստացված մի օրհնություն, որի իրականացումը կախված է ուխտերի հավատարմորեն կատարելուց» (*The House of the Lord*, rev. ed. [1976], 84):

Դուք կարող եք կրկնել հենց նոր նկարագրված ուխտերը՝ դրանք գրելով գրատախտակի վրա: Շեշտեք, որ մենք ուխտեր ենք կապում լինելու արդարակյաց և մաքուր և նաև ուխտեր ենք կապում տալու այն ամենը, ինչ ունենք Տիրոջ արքայության կառուցման համար: Կարդացեք հետևյալ միտքը.

«Մենք ուխտյալ ժողովուրդ ենք: Մենք ուխտ ենք կապում տրամադրել մեր ունեցվածքը, մեր միջոցները՝ ժամանակը, դրամը, շնորհները, այն ամենից ինչ ենք և այն ամենից ինչ ունենք երկրի վրա Աստծո արքայության կառուցման համար» (Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար, էջ 35):

• Ինչպե՞ս կարող ենք Աստծո արքայության կառուցմանը նվիրաբերել այն ամենը, ինչ ունենք:

• Ի՞նչն է երբեմն խանգարում անդամներին Տիրոջ արքայությանը նվիրաբերել այն ամենը, ինչ ունեն:

Դուք կարող եք կիսվել ձեր վկայությամբ այն օրհնությունների վերաբերյալ, որոնք ստացել եք ձեր կյանքում , որովհետև կապել և պահել եք տաճարային ուխտերը: Կամ կարող եք մեկ ուրիշ օժտում ստացած անձնավորության խնդրել կիսվել իր վկայությամբ:

ՄԵՆՔ ՊԵՏՔ Է ՀԱՎԱՏԱՐՄ ԼԻՆԵՆՔ ԱՅՆ ՈՒԽՏԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԿԱՊՈՒՄ ԵՆՔ ՏԱՃԱՐՈՒՄ

Բացատրեք, որ Տերն ասել է. «Այն ամենին որ շատ տրվեց՝ նրանից շատ կուզվի» (Ղուկաս 12.48):

• Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս է այս հատվածն առնչվում այն ուխտերի հետ, որ մենք կապում ենք տաճարում:

Բացատրեք, որ Տերը տվել է տաճարային արարողություններն ու ուխտերը, որպեսզի Նրա զավակները կարողանան հասկանալ այս կյանքի նպատակը և նախապատրաստվեն հավերժական կյանքի փառավոր հնարավորությունների համար: Երբ մենք ստանում ենք այս օրհնությունները, մենք պատասխանատու ենք դառնում մեր ընդլայնված հասկացողությանն ու հնարավորություններ-

րին արժանի ապրել: Շեշտեք, որ մենք պետք է հավատարիմ լինենք, այն ուխտերին, որոնք մենք կապել ենք տաճարում:

• Ինչո՞ւ է այդքան կարևոր հավատարիմ լինել այն ուխտերին, որոնք մենք կապում ենք տաճարում:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 82.10:

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Ես ասում են ձեզ, Տերը կապված չէ, եթե դուք չպահեք ուխտը: Տերը երբեք չի խախտում իր ուխտը: Երբ նա ուխտ է կապում մեզանից որևէ մեկի հետ, նա չի խախտի այն: Բայց, երբ այն խախտվում է, նա պարտավորվածություն չունի մեզ օրհնություն տալու և մենք չենք ստանա այն» (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:256–57):

«Ես՝ Տերս կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ, բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք» (ՎԱՌ 82.10):

ՄԵՐ ՀԱՎԱՏԱՐԻՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԽՏԵՐԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ և ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ԿԲԵՐ

Բացատրեք, որ տաճարը խաղաղության մի վայր է և սուրբ ապաստան: Պարբերաբար տաճար հաճախելով և հավատարիմ մնալով մեր ուխտերին, մենք կգտնենք խաղաղություն, ապահովություն և ուղղություն մեր կյանքում:

Երեց Նիլ Ա. Մաքսվելն ասել է. «Եթե մենք պահենք մեր ուխտերը, ուխտերն էլ մեզ հոգեպես ապահով կպահեն» (in Conference Report, Apr. 1987, 87; or *Ensign*, May 1987, 71):

• Ինչպե՞ս են մինչև այժմ ձեր կապած ուխտերը օգնել հոգեպես ապահով պահել ձեզ:

Նշեք, որ տաճարում մենք ուխտ ենք կապում արժանի ապրել՝ վերադառնալու Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ներկայությունը: Երբեմն մեր ամենօրյա մաքառումների մեջ մենք գուցե զարմանանք, թե այդպիսի կյանքով ապրել արդյո՞ք հնարավոր է:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ 1 Նեփի 17.3, 13:

• Ի՞նչ են սովորեցնում սուրբ գրվածքներն այն մասին, թե ինչպես Տերը կօգնի մեզ, մինչ մենք ձգտում ենք վերադառնալ Նրա մոտ: Ինչպե՞ս են այս սուրբ գրվածքներն իրականացել ձեր կյանքում:

Երեց Բոյդ Ք. Փակերն ասել է. «Երբ դուք գաք տաճար և ստանաք ձեր օժտումը և ծնկի իջնեք զոհասեղանի առաջ և կնքվեք, դուք կարող եք ապրել սովորական կյանքով և լինել սովորական մի հոգի, պայքարելով գայթակղության դեմ՝ ձախողվելով և ապաշխարելով, և կրկին ձախողվելով և կրկին ապաշխարելով, բայց միշտ վճռական լինելով պահելու ձեր ուխտերը…. Եվ հետո կգա օրը, երբ դուք կստանաք օրհնությունը. «Լավ, բարի և հավատարիմ ծառա, քիչ բաների վրա հավատարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտիր քո Տիրոջ ուրախությունը» (Մատթեոս ԻԵ.21) (*Let Not Your Heart Be Troubled* [1991], 257):

Հովարդ Վ. Հանթերը կոչ է արել մեզ հաճախ գնալ տաճար «տաճարային երկրպագության անձնական օրհնության համար, այն սրբության և ապահովության համար, որը տրվում է այդ սրբագործված և նվիրագործված պատերի ներսում: Տաճարը գեղեցկության վայր է, հայտնության վայր է, խաղաղության վայր է: Այն Տիրոջ տունն է: Այն սուրբ է Տիրոջ համար: Այն պետք է սուրբ լինի մեզ համար» (quoted in Jay M. Todd, "President Howard W. Hunter," *Ensign,* July 1994, 5):

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կիսվել իրենց զգացումներով տաճարային արարողություններ ստանալու և Երկնային Հոր հետ ուխտեր կապելու օրհնությունների վերաբերյալ:

Եթե ժամանակը թույլ է տալիս, և եթե ձեր տարածաշրջանում Introductory Gospel Messages տեսաժապավենը մատչելի է, կարող եք ցուցադրել այդ ներկայացումը:

Կարող եք դասընթացի մասնակիցներին առաջարկել երգել "*More Holiness Give Me*." օրհներգը: Վկայություն բերեք տաճարային արարողություններ ստանալու և Երկնային Հոր հետ ուխտերի մեջ մտնելու արտոնության վերաբերյալ:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

5 ՍՈՎՈՒԵԼՈՎ ՏՐԻՈՋՐՑ ԽՈՒՀԻԴԱՆՐՇՆԵԻՐ ՄՐՋՈՑՈՎ

«Ես կտամ մարդկանց զավակներին տող առ տող, ցուցում առ ցուցում, մի քիչ այստեղ և մի քիչ այնտեղ. և օրհնված են նրանք, ովքեր ականջ են դնում իմ ցուցումներին» (2 Նեփի 28.30):

ՆՊԱՏԱԿԸ

Օգնել դասընթացի մասնակիցներին, որպեսզի հասկանան և գնահատեն խորհրդանիշների օգտագործումը տաճարում:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

1. Բերեք ձեր երկրի դրոշը կամ ձեր երկրի դրոշի նկարը:
2. Խնդրեք դասընթացի մասնակիցներին ամփոփել այն պատմությունը, թե ինչպես Եղբայրներից մեկը պատասխանեց տաճարային հանդերձների վերաբերյալ հարցին: Պատմությունը գտնվում է *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար գրքույկի* 20-21 և 23 էջերում:

Հիշեցում ուսուցչին. Տաճարային արարողություններն ու ուխտերը սրբազան են և դրանց վերաբերյալ քննարկումները սահմանափակվում են տաճարի ներսում: Այդ պատճառով դասարանական քննարկումը պետք է սահմանափակվի այս ձեռնարկում տրվող բացատրություններով:

ԴԱՍԸ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը:

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

ԽՈՒՀԻԴԱՆՐՇՆԵԻԸ ԿԱԻԵՎՈՒ ԵՆ ՄԵԻ ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔՈՒՄ

Բացատրեք, որ մեր ամենօրյա կյանքում անընդհատ օգտագործվում են խորհրդանիշներ: Գրատախտակի վրա գծեք հետևյալ կամ այլ հատուկ խորհրդանիշներ: Խնդրեք դասընթացի մասնակիցներին նկարագրել թե ի՞նչ է նշանակում յուրաքանչյուր խորհրդանիշը:

Լսարանին ցույց տվեք ձեր երկրի դրոշը կամ դրոշի նկարը և նրանց խնդրեք նկարագրել, թե ի՞նչ է նշանակում դրոշը նրանց համար:

• Ի՞նչ այլ առարկաներ կամ գործողություններ կան, որոնք ցույց են տալիս հայրենասիրությունը: (Երգ, համազգեստ, որևէ հագուստ, տոն կամ տոնակատարություն):

Նշեք, որ դրանք խորհրդանիշներ են, որոնք նշանակում են կամ ներկայացնում հայրենասիրությունը:

• Որո՞նք են սիրո և հարգանքի խորհրդանիշները: (Նվեր կամ մատանի, համբույր կամ գրկախառնություն, սրտաձև պատկեր):

• Արդյո՞ք խորհրդանիշներն արտահայտում են նույն իմաստը բոլոր մարդկանց համար: Ինչո՞ւ այո, կամ ինչո՞ւ ոչ:

• Ի՞նչու ենք մենք օգտագործում խորհրդանիշներ:

Թույլ տվեք, որ դասընթացի մասնակիցները քննարկեն: Գուցե նրանք առաջարկեն այնպիսի գաղափարներ ինչպիսիք են՝

1. Խորհրդանիշները կարող են օգնել մեզ հիշել կարևոր բաներ:
2. Խորհրդանիշները կարող են սովորեցնել մեզ վերացական ճշմարտություններ, որոնք կարող են դժվար լինել այլ ձևով սովորելու համար:
3. Խորհրդանիշները կարող են ներկայացնել զգացմունքներ:
4. Խորհրդանիշները կարող են սովորեցնել մեզ տարբեր սկզբունքներ ըստ սովորելու մեր անհատական պատրաստվածության:

Բացատրեք, որ երբ խորհրդանիշները կրկնվում են, մենք սովորում ենք դրանք ավելի լավ հասկանալ:

ՀՐՍՈՒՍ ՔԻՐՍՏՈՍԸ և ՆԻԱ ՄԱՀԳԱՀԵՆԵԻԸ ՕԳՏԱԳՈՒԾՈՒՄ ԷՐՆ ԽՈՒՀԻԴԱՆՐՇՆԵԻ:

Բացատրեք, որ Փրկիչն անընդհատ խորհրդանիշեր էր օգտագործում, երբ Նա սովորեցնում էր:

• Կարո՞ղ եք նշել մի քանի դեպք, երբ Տերը սովորեցնում էր՝ օգտագործելով խորհրդանիշներ:

Դասընթացի մասնակիցները կարող են նշել այնպիսի բաներ ինչպիսիք են՝ կորած ոչխարները (տես՝ Մատթեոս ԺԸ.12–14), մանանեխի սերմը (տես՝ Մատթեոս ԺԳ. 31–32), կամ թանկագին մարգարիտ (տես՝ Մատթեոս ԺԳ.45–46):

• Ձեր կարծիքով, ինչո՞ւ էր Փրկիչն օգտագործում խորհրդանիշներ, երբ Նա սովորեցնում էր:

Թույլ տվեք դասընթացի մասնակիցներին քննարկել: Այնուհետև դիտարկեք հետևյալ միտքը.

« Ինքը՝ Տերը, Վարդապետը, Իր աշակերտներին շատ հաճախ սովորեցնում էր առակների միջոցով, այսինքն՝ բանավոր խոսքով, խորհրդանշորեն ներկայացնելով այնպիսի բաներ, որոնք այլ կերպ դժվար կհասկացվեին: Նա խոսում

էր Իր աշակերտների առօրյա կյանքից վերցված սովորական փորձառություններից, խոսում էր հավերի և ճտերի, թռչունների, ծաղիկների, կողոպտիչների, ճանապարհի ավազակների, արևի մայրամուտի, հարուստների և աղքատների մասին…. Նա պատմում էր մանանեխի հատիկի և մարգարիտի մասին: Նա ցանկանում էր ուսուցանել Իր ունկնդիրներին, Նա խոսում էր հասարակ բաներից, օգտագործելով խորհրդանիշներ: Այս բաներից ոչ մեկը անհասկանալի կամ խորհրդավոր չէ, այնուամենայնիվ դրանք բոլորը խորհրդանշական են (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար*, 8):

Բացատրեք, որ մարգարեները և առաքյալները Հիսուս Քրիստոսի և Նրա քավող զոհաբերության մասին ուսուցանելիս հաճախ են օգտագործել խորհրդանիշներ: Հիսուս Քրիստոսի Քավությունն ավետարանի և բոլոր օրհնությունների հիմքն է, որոնք մենք ստանում ենք: Այն հնարավոր է դարձնում փրկությունը: Այդ պատճառով սուրբ գրքերի խորհրդանիշների մեծ մասը ուսուցանում են մեզ Փրկչի և Նրա զոհաբերության մասին:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Մովսես 6.63:

- Երկրի վրա ի՞նչ բաներ են վկայում Փրկչի մասին:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Ալմա 13.16:

- Ինչպե՞ս են քահանայության արարողությունները վկայում Փրկչի մասին:

Նշեք, որ մինչև Փրկչի կողմից Քավության իրականացումը, Նրա ուխտի ժողովուրդը կենդանիներ էր զոհաբերում, որպես Նրա քավող զոհաբերության խորհրդանիշ (տես՝ Մովսես 5. 4–8): Փրկչի մահով և Հարությամբ այդ գործունեությանը վերջ դրվեց: Այժմ Տերը պատվիրում է մեզ «որպես զոհաբերություն [Իրեն] մատուցել կոտրված սիրտ և ապաշխարող հոգի» (3 Նեփի 9.20): Եվ քահանայության արարողությունները շարունակում են օգնել մեզ հիշելու Փրկչի քավող զոհաբերությունը: Երեց Ռասել Մ. Նելսոնը սովորեցրել է.

«Ավետարանի հիմնական արարողությունները խորհրդանշում են Քավությունը: Ընկղմամբ մկրտությունը խորհրդանշում է Քավիչի մահը, թաղումը, և Հարությունը: Հաղորդությունը ճաշակելը վերանորոգում է մկրտության ուխտերը և նաև վերականգնում մեր հիշողությունը Փրկչի կոտրված մարմնի և մեզ համար հեղած Նրա արյան մասին: Տաճարային արարողությունները խորհրդանշում են մեր հաշտեցումը Տիրոջ հետ և հավերժորեն կնքում ընտանիքները միասին» (in Conference Report, Oct. 1996, 47; or *Ensign*, Nov. 1996, 35):

ԽՈՒՀԻԴԱՆՐՇՆԵԻԸ ՍՈՎՈՒԵՑՆՈՒՄ ԵՆ ՄԵԶ ՃՇՄԱՒՏՈՒԹՅՈՒՆԸ, ԵԹԵ ՄԵՆՔ ՀՈԳԵՊԵՍ ԶԳԱՅՈՒՆ ԵՆՔ

Բացատրեք, որ երբ Փրկիչն ապրում էր երկրի վրա, Նրա աշակերտները հարցրեցին Նրան, թե ինչո՞ւ էր սովորեցնում առակներով: Առակները պատմություններ են, որոնք ուսուցանում են կարևոր ճշմարտություններ՝ հաճախ օգտագործելով խորհրդանիշների լեզուն: Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Մատթեոս ԺԳ.10–12, որպեսզի իմանան, թե ինչ ասաց Փրկիչը:

• Ի՞նչ եք կարծում ի՞նչ ի նկատի ուներ Փրկիչը, երբ Նա ասաց այս:

Բացատրեք, որ Տերը բացահայտում է ճշմարտությունը նրանց, ովքեր հոգեպես պատրաստ են հասկանալու այն: Նրանք, ովքեր ընդունում են ճշմարտությունը հավատքով և հնազանդությամբ, շարունակում են ստանալ ավելի շատ ճշմարտություն: Նրանք, ովքեր հոգեպես պատրաստ չեն և ովքեր չեն ընդունում ճշմարտությունը կամ ընդունում են կասկածող սրտով, աստիճանաբար կկորցնեն այն ճշմարտությունը, որ ունեն:

Խորհրդանիշներով պատմությունը ճշմարտությունն այնպես է ներկայացնում, որ նրանք, ովքեր հոգեպես պատրաստ են, հասկանում են խորհրդանիշների իմաստը: Նրանք, ովքեր պատրաստ չեն, չեն հասկանում իմաստը:

Փրկչի ժամանակաշրջանի որոշ մարդիկ հասկանում էին Նրա առակների ուղերձները, բայց կային շատերը, ովքեր չէին հասկանում: Նույնը ճշմարիտ է և այսօր: Եկեղեցու արդարակյաց անդամներն ունեն հոգևոր ըմբռնման տարբեր մակարդակներ:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ 2 Նեփի 28.30 և Վարդապետություն և Ուխտեր 42. 49–50:

• Ի՞նչ են սովորեցնում սուրբ գրվածքերն այն մասին, թե ինչպես ենք իմանում ճշմարտությունն Աստծուց:

Բացատրեք, որ մենք բոլորս կարող ենք հոգեպես զարգանալ մինչև այն մակարդակը, որտեղ մենք կկարողանանք հասկանալ ավետարանում, սուրբ գրքերում և հատկապես տաճարում օգտագործվող խորհրդանիշների իմաստը:

ՏԱՃԱՐՈՒՄ ԱՄԵՆԱՍԻԲԱԶԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵԻԸ ՀԱՂՈՐԴՎՈՒՄ ԵՆ ԽՈՒՀԻԴԱՆՐՇՆԵԻՐ ՄՐՋՈՑՈՎ

Բացատրեք, որ երկրի վրա ամենասրբազան ուսմունքները խորհրդանիշների միջոցով են հաղորդվում տաճարում: Խորհրդանշական ձևով տաճարի ուսմունքներն ու ծեսերը տանում են մեզ ճանապարհորդության դեպի վեր՝ դեպի հավերժական կյանք՝ ավարտելով դեպի Աստծո ներկայությունը խորհրդանշական մուտքով: Պատկերվող կերպարները, շրջապատող միջավայրը, կրվող հագուստները, տրվող նշանները, և բոլոր իրադարձությունները, որոնք ներկայացվում են տաճարում, խորհրդանշական են: Երբ դրանք հասկացվում են, յուրաքանչյուր մարդու դրանք կօգնեն ճանաչել ճշմարտությունը և հոգեպես աճել:

«Բոլոր բաներն ունեն իրենց նմանությունը, և բոլոր բաները ստեղծվել են և արարվել իմ մասին վկայելու համար, թե նյութական բաները, թե հոգևոր բաները» (Մովսես 6.63):

Որոշ խորհրդանիշներ պարզ են և իմաստն ակներև է: Տաճարն ինքը խորհրդանիշ է:

«Եթե դուք տեսել եք տաճարներից որևէ մեկը գիշերով, ապա գիտեք, թե որքան տպավորիչ տեսարան է դա: Տիրոջ տունը, լույսի մեջ ողողված, կանգնած մթության մեջ, Հիսուս Քրիստոսի ավետարանի զորությունն ու ոգեշնչումը խորհրդանշող փարոս է, որը հաստատուն կանգնած է աշխարհում, որն էլ ավելի խորն է սուզվում հոգևոր խավարի մեջ» (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար,* 10):

Տաճարային հագուստները ևս խորհրդանշական են: Երբ մենք տաճար ենք մտնում, մենք փոխում ենք դրսի շորերը տաճարային ճերմակ հագուստներով, որը մաքրության խորհրդանիշ է: Նախագահ Ջեյմս Ի. Ֆաուստն ասել է.

«Տաճարային երկրպագության հիմնական սկզբունք է այն, որ Աստված աչառ չէ [Գործք Ժ.34]: Տաճարի սրբագործված պատերի ներսում գոյություն չունի խտրականություն՝ կախված դիրքից, հարստությունից, կարգավիճակից, ռասայից կամ կրթությունից: Բոլորը ճերմակ են հագնված: Բոլորը ստանում են նույն հրահանգները: Բոլորը կապում են նույն ուխտերն ու տալիս նույն խոստումները: Բոլորը ստանում են նույն բարձրագույն հավերժական օրհնությունները, եթե նրանք արժանի են ապրում դրանք հայցելու համար: Բոլորը հավասար են իրենց Ստեղծողի առջև» (in Conference Report, Apr. 1997, 23; or *Ensign*, May 1997, 20):

Բացատրեք, որ այն անդամները, ովքեր ստանում են տաճարային արարողությունները և ուխտեր են կապում Աստծո հետ, մնացած իրենց ողջ կյանքի ընթացքում կրում են հատուկ հանդերձներ (ներքնահագուստ): Կարդացեք հետևյալ միտքը.

«Հանդերձը ներկայացնում է սրբազան ուխտերը: Այն համեստության գրավական է և վահան ու պաշտպանություն է դառնում կրողի համար…. Մարմինը պատող հանդերձը տեսանելի և շոշափելի հիշեցում է [տաճարում արված ուխտերի] մասին: Եկեղեցու շատ անդամների համար հանդերձը ծառայել է որպես պաշտպանական պատնեշ, երբ կրողը գայթակղության է ենթարկվել: Մյուս բաների թվում այն խորհրդանշում է նաև մեր խորը հարգանքը Աստծո օրենքների հանդեպ, որոնց շարքում են բարոյական չափանիշները» (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար,* 20, 23):

Խնդրեք հանձնարարություն ստացած դասընթացի մասնակցին ամփոփել, թե ինչպես էր Եղբայրներից մեկը նկարագրել տաճարային հագուստի նպատակը (տես՝ *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար,* 20–21, 23):

Բացատրեք, որ տաճարային ծիսակատարությունը գրեթե բոլոր տեսակետերից խորհրդանշական է: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր անձնավորություն պետք է պատրաստվի որքան հնարավոր է հոգեպես զգայուն լինել տաճարային օժտման խորհրդանշական բնույթի հանդեպ:

- Ի՞նչը կարող է խանգարել մարդուն հոգեպես զգայուն լինել տաճարում:

Դասընթացի մասնակիցները հավանաբար կնշեն այնպիսի բաներ ինչպիսիք են՝

1. Հնարավոր է մարդն արժանի չլինի: Նա, ով անկեղծորեն չի ապաշխարել և խոնարհաբար ու աղոթքով չի պատրաստվել տաճարի համար, խորհրդանիշներն անկենդան կհամարի և դրանց իմաստը կմնա չբացահայտված:
2. Մարդ կարող է հավատքի պակաս ունենալ: Մարդը, որը հավատք չունի Հիսուս Քրիստոսի և տաճարային ծիսակատարությունների հանդեպ, չի կարող Սուրբ Հոգուց ոգեշնչում ստանալ, որն անհրաժեշտ է տաճարային օժտումն ընմբռնելու համար:

3. Մարդ կարող է այնքան կենտրոնանալ ծիսակատարության արտաքին գործողությունների վրա, որ կարող է բաց թողել խորհրդանիշների միջոցով ներկայացված հզոր ուսմունքները:

• Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել, որպեսզի հոգեպես զգայուն լինենք տաճարում:

ԵԶԻԱՓԱԿՈՒՄ

Նշեք, որ նրանք, ովքեր տաճար են գնում առաջին անգամ, կարող են ակնկալել, որ կսովորեն շատ նոր բաներ և կզգան Տիրոջ Հոգու զորությունը: Խրախուսեք դասընթացի մասնակիցներին հոգեպես նախապատրաստվել տաճարային իրենց փորձառությանը: Նրանց հիշեցրեք, որ այն բոլորն ինչ ներկայացված է, չի կարող մեկ այցելությամբ հասկանալի դառնալ: Նրանք պետք է որքան հնարավոր է հաճախ վերադառնան տաճար, որպեսզի կարողանան շարունակել սովորել և թարմացնել իրենց հոգևոր զգացումները:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

ՊԱՏԻԱՍՏՎԵԼ ՄՏՆԵԼՈՒ ՍՈՒԻԲ ՏԱՃԱՌ

«Եվ որքան որ իմ ժողովուրդը Տիրոջ անունով տուն կառուցի ինձ համար և թույլ չտա, որ որևէ անմաքուր բան մտնի այնտեղ, որպեսզի այն չապականվի, իմ փառքը պիտի հանգչի դրա վրա» (ՎԱՈ 97.15):

ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի մասնակիցներին նախապատրաստել, որ արժանի մտնեն տաճար:

ԴԱՍԸ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՊԵՏՔ Է ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԻ ՏԱՃԱՌԻ ՀԱՄԱՐ

Բացատրեք, որ յուրաքանչյուր անձնավորություն անհատապես պատասխանատու է քայլեր ձեռնարկել, որոնք կտանեն դեպի տաճարային լրիվ օրհնությունները:

Համառոտ քննարկեք հետևյալ հինգ գաղափարները: Յուրաքանչյուրը ներկայացնում է մի ուղի, որով մենք պետք է նախապատրաստվենք մտնելու տաճար: Քննարկմանը զուգընթաց կարող եք մտքերը հերթականությամբ գրել գրատախտակին:

1. Յուրաքանչյուր մարդ պետք է արժանի լինի:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 97.15-17:

• Ի՞նչ է սովորեցնում ձեզ այս հատվածը արժանի լինելու կարևորության մասին, երբ դուք տաճար եք մտնում:

Նախագահ Հովարդ Վ. Հանթերը խնդրել է մեզ հաշվի առնել այն «վերաբերմունքն ու արդարակյաց վարքը, որի վրա Տերը մեր ուշադրությունն է հրավիրում, Ջոզեֆ Սմիթի միջոցով, Կիրթլենդի Սրբերին Նրա կողմից տրված խորհրդում, երբ նրանք պատրաստվում էին տաճար կառուցել»:

Այս խորհուրդը գտնվում է Վարդապետություն և Ուխտեր 88.119-ում: Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ այս հատվածը:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին խորհել նաև այն հարցի մասին, որն առաջադրվել է Նախագահ Հանթերի կողմից. «Արդյո՞ք նշված վերաբերմուն-

քը և վարքը իսկապես արտահայտում են այն, ինչ մեզանից յուրաքանչյուրը ցանկանում և ձգտում է լինել» (“The Great Symbol of Our Membership,” *Ensign*, Oct. 1994, 2):

2. Յուրաքանչյուր մարդ պետք է խոնարհ լինի:

Յուրաքանչյուր մարդ պետք է խոնարհությամբ մտնի տաճար, ի վերուստ ուսուցանվելու ցանկությամբ:

• Ինչու՞ է խոնարհությունն այդքան կարևոր, երբ մենք ծառայում և սովորում ենք տաճարում:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 136. 32–33:

• Ի՞նչ է սովորեցնում այս հատվածը խոնարհության կարևորության մասին: Ինչպե՞ս կարող եք կիրառել այս խորհուրդը առաջին անգամ տաճար այցելելիս:

3. Յուրաքանչյուր մարդ պետք է հասկանա, որ տաճարային արարողություններն ու ուխտերը ստանալը կարևոր է հավերժական կյանքի հասնելու համար:

«Կազմակերպեք ձեզ, նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի տուն, այսինքն աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն» (ՎԱՈ 88.119):

Նախագահ Հարոլդ Բ. Լին ասել է. «Տաճարային ծիսակատարությունները նախատեսված են իմաստուն Երկնային Հոր կողմից, որը մեզ այս վերջին օրերում բացահայտել է դրանք, որպես ուղեցույց և պաշտպանություն ողջ կյանքի ընթացքում, որպեսզի դուք և ես անհաջողություն չկրենք արժանանալու վեհացման սելեստիալ արքայությունում, որտեղ բնակվում են Աստված և Քրիստոսը» (“Enter a Holy Temple,” *Improvement Era,* June 1967, 144):

Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Այս օրհնություններն ապահովում են Տիրոջ կողմից մեզ առաջարկված մեծագին մարգարիտը՝ մեր հավատարմության միջոցով, *քանզի սրանք մեծագույն օրհնություններն են, որոնք մենք կարող ենք ստանալ այս կյանքում:* Հրաշալի բան է Եկեղեցու անդամ դառնալը, բայց դուք չեք կարող վեհացում ստանալ մինչև Տիրոջ տանը ուխտեր չկապեք և չստանաք բանալիներն ու իշխանությունները, որոնք շնորհվում են այնտեղ և որոնք այսօր երկրի վրա ոչ մի այլ տեղ չեն կարող տրվել» (Doctrines of Salvation, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:253):

4. Յուրաքանչյուր մարդ պետք է հասկանա տաճարային հանդերձ կրելու կարևորությունը:

Բացատրեք, որ նրանք, ովքեր մասնակցել են տաճարային ծիսակատարությանը, արտոնություն ունեն կրելու սուրբ քահանայության հանդերձը: Եկեղեցուն ուղղված մի ուղերձում Առաջին Նախագահությունն ասել է.

«Եկեղեցու անդամները, ովքեր տաճարում հանդերձ են հագել, ուխտ են կապել կրելու այն իրենց ողջ կյանքի ընթացքում: Սա նշանակում է, որ այն պետք է կրել որպես ներքնազգեստ գիշեր թե ցերեկ….

«Հիմնական սկզբունքը պետք է լինի կրել հանդերձը և առիթներ չփնտրել այն հանելու համար…. Եթե անհրաժեշտություն է առաջանում հանդերձը հանել…. այն հնարավորին չափ շուտ պետք է կրկին հագնել:

«Համեստության սկզբունքները և մարմինը պատշաճորեն ծածկված պահելը մտնում են ուխտի մեջ և հագուստներ կրելիս պետք է ղեկավարվել այդ սկզբունքով: Օժտում ստացած Եկեղեցու անդամները հանդերձը կրում են որպես հիշեցում այն սրբազան ուխտերի, որոնք նրանք կապել են Տիրոջ հետ և նաև որպես պաշտպանություն գայթակղության և չարի դեմ: Թե ինչպես ենք այն կրում, Փրկչին հետևելու մեր ներքին պարտավորության արտաքին դրսևորումն է» (First Presidency letter, 10 Oct. 1988):

5. Յուրաքանչյուր մարդ պետք է անձնական և սրբազան երկրպագության համար նախապատրաստված լինի:

Տաճարում ծիսակատարություններից առաջ, դրա ընթացքում և դրանից հետո մարդը մտորելու և Երկնային Հորը և Հիսուս Քրիստոսին ավելի մոտ զգալու հնարավորություն ունի: Բոլորի առջև ծառանում են հարցեր, որոնք պատասխանի կարիք ունեն, բեռներ, որոնք թեթևացման կարիք ունեն, խնդիրներ, որոնք պետք է լուծվեն: Շատերն են տաճարն ընդունում, որպես աշխարհից հեռանալու և Երկնային Հոր հետ հաղորդակցվելու մի վայր: Շատերն են տաճարում պատասխաններ, խաղաղություն և ուրախություն գտնում:

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն ասել է. «Տաճարներն անձնական հայտնության վայրեր են: Երբ ես որևէ խնդրից կամ դժվարությունից նեղվել եմ, աղոթքը սրտումս գնացել եմ Տիրոջ Տուն պատասխանների համար: Այդ պատասխանները եկել են պարզ և անսխալ ուղիներով» (“What I Hope You Will Teach Your Children about the Temple,” *Ensign*, Aug. 1985, 8):

Բացատրեք, որ տաճարում մենք կարող ենք ներկայացնել նրանց անունները, ովքեր հատուկ կարիքներ ունեն, այնպես որ նրանք ովքեր տաճար են հաճախում, կարող են միավորել իրենց հավատքը և աղոթքները այդ մարդկանց համար:

ՀԱՏՈՒԿ ՊԱՏԻԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋՐՆ ԱՆԳԱՄ ՏԱՃԱՐ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Հետևյալ տեղեկությունը կօգնի յուրաքանչյուր մարդու բոլոր անհրաժեշտ պատրաստությունները տեսնել առաջին անգամ տաճար այցելելու համար և ապահովել, որ այդ այցելությունը վսեմացնող լինի: Դասընթացի մասնակիցների հետ քննարկեք այն տեղեկությունները, որոնք վերաբերում են իրենց հանգամանքներին:

1. *Տաճարային Երաշխավորագիր:* Ձեռք բերեք տաճարային երաշխավորագիր: Չմոռանաք տանել ձեր երաշխավորագիրը ձեզ հետ տաճար, քանի որ մուտքը թույլատրվում է միայն նրանց, ովքեր ուժի մեջ գտնվող երաշխավորագիր ունեն: Եթե դուք արժանի ապրեք, երաշխավորագիրը թույլ կտա ձեզ մտնել Եկեղեցու ցանկացած տաճար, հաջորդ երկու տարիների ընթացքում, որքան հաճախ որ դուք կամենաք: Ձեր տաճարային երաշխավորագիրը նորացնելու համար, դուք պետք է հարցազրույց անցնեք ձեր եպիսկոպոսության որևէ անդամի, ձեր ճյուղի նախագահի, ցցի նախագահության որևէ անդամի կամ միսիայի նախագահի հետ:

2. *Այցելության ծրագրի և գրաֆիկի կազմում:* Օժտում կամ կնքման արարողություն ստանալու համար, մինչև տաճար գնալը, զանգահարեք տաճար, որպեսզի պայմանավորվեք: Ճշտեք, երբ եք ժամանելու տաճար, որքան եք ծրագրում մնալու և ինչ է անհրաժեշտ վերցնել: Եթե անհրաժեշտ է խնդրեք թարգմանչի օգնությունը:

3. *Ճանապարհորդական ծրագրեր:* Եթե տաճարից հեռու եք ապրում, պետք է հաշվի առնեք հետևյալը.

   • Նախօրոք տրանսպորտի, կացարանի ու սննդի վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերեք: Հնարավորության դեպքում ձեզ համար ավելի լավ կլինի ճանապարհորդել խմբի հետ:

   • Անհրաժեշտության դեպքում ձեռք բերեք պայմանավորվածություն, որպեսզի նախօրոք փոխեք փողը այն երկրի տարադրամով, որտեղ տաճարն է գտնվում:

   • Վերցրեք բավականաչափ դրամ բոլոր ծախսերը հոգալու համար: Հավանաբար ձեզ անհրաժեշտ կլինի գնել լրացուցիչ հանդերձներ, վարձով վերցնել տաճարային հագուստ և վճարել կացարանի և ճանապարհորդության համար: (Ի նկատի ունեցեք, որ վարձով հագուստներ ոչ բոլոր տաճարներում են մատչելի: Առաջին Նախագահությունը խրախուսում է բոլոր անդամներին գնել իրենց սեփական տաճարային հագուստը):

4. *Հագուստեղենը*: Ծրագրեք հագնվել այնպես, ինչպես դուք կհագնվեիք կիրակնօրյա ժողովի գնալիս: Կանայք տաճարում չպետք է անդրավարտիք հագնեն:

5. *Ուղեկցորդներ*: Բոլոր նրանք, ովքեր առաջին անգամ են տաճար գնում, կարող են ունենալ ուղեկցորդ իրենց ընկերակցելու համար: Դա կարող է լինել նույն սեռի բարեկամ կամ ընկեր, որը նախկինում եղել է տաճարում կամ էլ տաճարի աշխատողներից մեկը կարող է օգնել: Տաճարի աշխատողները բոլոր դեպքերում կառաջարկեն բարեկամական ուղեկցություն:

6. *Կնքման աշխատանք:* Եթե դուք ծրագրում եք կնքման աշխատանք կատարել ձեր մահացած նախնիների համար, դուք պետք է ձեզ հետ տաճար վերցնեք լրացված ընտանեկան խմբի գրառումները: Եթե դուք և ձեր կողակիցը պետք է կնքվեք կամ եթե դուք պատրաստվում եք կնքվել ձեր երեխաների հետ, դուք պետք է ունենաք ձեր սեփական ընտանեկան խմբի գրառումները: Եթե դուք պատրաստվում եք ամուսնանալ, ձեզ անհրաժեշտ կլինի ենթարկվել բոլոր քաղաքացիական տեղական օրենքների պահանջներին և ձեզ հետ բերել օրինական ուժ ունեցող ամուսնության վկայագիր: Ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար ուշադիր կարդացեք *Member's Guide to Temple and Family Hist ory Work* (34697) ձեռնարկը, այն մասին, թե ինչպես նախապատրաստվել թե ողջերի և թե մահացածների համար տաճարային արարողություններին: Դուք կարող եք նաև կապ հաստատել այն տաճարի արձանագրողի հետ, որը պատրաստվում եք այցելել:.

7. *Երեխաների խնամքը:* Եթե երեխաները տաճար են գալիս մասնակցելու կնքման ծիսակատարությանը, նրանց մասին հոգ կտարվի տաճարի երիտասարդական կենտրոնում, մինչև որ ժամանակը գա ձեզ միանալու կնքման սենյակում: Երեխաների համար կապահովվեն ծիսակատարության ճերմակ հագուստներ: Կնքման ծիսակատարությունն ավարտելուց հետո, նրանք կվերադառնան կենտրոն սպասելու ձեզ այնտեղ: Երեխաների համար, ովքեր չեն մասնակցում կնքմանը, տաճարում խնամք չի ապահովվում:

8. *Տաճարային հանդերձներ:* Նախքան տաճար մտնելը, ձեզ անհրաժեշտ կլինի գնել մեկ կամ երկու զույգ տաճարային հանդերձներ: Մի հագեք դրանք նախքան տաճար գնալը: Ձեր օժտումը ստանալուց հետո և երբ կորոշեք ձեր ցանկացած չափսը և գործվածքը, դուք կարող եք գնել հավելյալ զույգ հանդերձներ: Որոշ մարդիկ սիրում են լվանալ իրենց հանդերձները համոզվելու, որ դրանք հարմար են նստում, նախքան նորերը գնելը: Տաճարային հանդերձներն արտադրվում են Եկեղեցու կողմից և կարող են գնվել Եկեղեցու Բաշխիչ Ծառայությունների միջոցով:

9. *Տաճարային հագուստ*: Առաջին Նախագահությունը խրախուսում է անդամներին գնել և օգտագործել իրենց սեփական տաճարային հագուստը: Որոշ տաճարներում, փոքր գումարով, հնարավոր է վարձով վերցնել տաճարային հագուստ, սակայն ցանկալի է, որ անդամներն ունենան և պահեն իրենց տաճարային հագուստը: Եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը կարող են տեղեկություն տալ, թե որտեղից կարելի է գնել այդ հագուստը:

   Քույրերը կարող են կրել իրենց հարսանյաց զգեստները տաճարային ամուսնության ժամանակ, սակայն զգեստը պետք է լինի ճերմակ, ունենա երկար թևքեր, ոճով և գործվածքով լինի համեստ առանց քղանցատուտի և զերծ լինի ավելորդ զարդարանքներից:

«Տաճարային ծիսակատարությունները նախատեսված են իմաստուն Երկնային Հոր կողմից…. որպեսզի դուք և ես անհաջողություն չկրենք սելեստիալ արքայությունում վեհացման արժանանալիս » (Նախագահ Հարոլդ Բ .Լի):

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Կիսվեք տաճարային աշխատանքի սրբազան լինելու վերաբերյալ ձեր վկայությամբ: Արտահայտեք ձեր երջանկությունը, որ տեսնում եք դասընթացի մասնակիցներին տաճար մտնելու համար նախապատրաստվելիս:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

Այս դասից հետո, դասընթացի մասնակիցները և ուսուցիչները որտեղ հնարավոր է, պետք է միասին հաճախեն տաճար:

7 ՇԱՒՈՒՆԱԿԵԼՈՎ ՎԱՅԵԼԵԼ ՏԱՃԱՒ ՀԱՃԱԽԵԼՈՒ ՕՒՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՒԸ

«Քանզի ահա, ես ընդունել եմ այս տունը, և իմ անունը պիտի լինի այստեղ. և ես ողորմածությամբ կհայտնվեմ իմ ժողովրդին այս տանը» (ՎԼՈ110.7):

ՆՊԱՏԱԿԸ

Հետևել դասընթացի մասնակիցների առաջին այցելությանը տաճար և օգնել նրանց նախապատրաստվելու, որ տաճարից բավականություն ստանան իրենց ողջ կյանքի ընթացքում:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

1. Պատրաստ եղեք այս դասը դարձնել միմյանց հետ կիսվելու ժամանակ: Դասընթացի մասնակիցներից շատերը կցանկանան քննարկել տաճար կատարած առաջին այցելությունը:
2. Հանձնարարեք դասընթացի մասնակիցներից մեկին պատրաստվել կարդալու Վարդապետություն և Ուխտեր 110.1–10 և դրա վերաբերյալ կիսվել իր զգացումներով:
3. Հանձնարարեք դասընթացի մասնակիցներից մեկին ամփոփել Եղիայի մասին տեղեկությունը, որը ներկայացված է *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար*, էջեր 23–24:
4. Նախապատրաստվեք պատասխանելու այն հարցերին, որոնք կարող է առաջացած լինեն տաճար կատարած առաջին այցելության ժամանակ, բայց մի քննարկեք հարցեր կամ տեղեկություններ, որոնք պետք է թողնվեն տաճարում անցկացվող քննարկման համար: Նման հարցեր լինելու դեպքում, խրախուսեք այդ անձանց՝ լրացուցիչ այցելություններ ծրագրել դեպի տաճար:

ԴԱՍԸ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հրավիրեք որևէ մեկին ասել բացման աղոթքը

Հարցրեք դասընթացի մասնակիցներին հարցեր ունեն, թե ոչ: Տրամադրեք այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է, որպեսզի ձեր կարողությունների չափով և Տիրոջ Հոգու առաջնորդությամբ պատասխանեք հարցերին: Հիշեք, որ տաճարային աշխատանքին վերաբերող որոշ հարցեր տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

ՏԱՃԱՒԱՅՐՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ ՍԵՒ ՊԱՀՊԱՆԵԼԸ

- Ինչպե՞ս էիք զգում ձեզ, երբ տաճարում էիք:

Բացատրեք, որ տաճարային ծառայությունն անընդհատ օրհնություններ կբերի նրանց կյանքում, ովքեր հաճախ կգնան տաճար: Ասեք դասընթացի մաս-

նակիցներին, որ քանի դեռ նրանց զգացումները տաճարից հետո թարմ են նրանց մտքում, նրանք կարող են գրել իրենց օրագրերում դրանց վերաբերյալ իրենց զգացումները: Նրանց հիշեցրեք, որ չնայած նրանք կարող են գրել իրենց զգացումների մասին, բայց նրանք չպետք է գրեն տաճարային աշխատանքի որոշ մանրամասների մասին, որոնք տաճարից դուրս չպետք է քննարկվեն:

• Ի՞նչ կարող եք անել, որպեսզի ձեր ողջ կյանքում տաճարային ծառայության հանդեպ սեր պահպանեք:

Գրատախտակին գրեք դասընթացի մասնակիցների գաղափարները: Դուք նաև կարող եք ներկայացնել հետևյալ գաղափարները:

1. Ամեն օր խորհեք տաճարային փորձառության մասին:

Բացատրեք, որ որոշ մարդիկ ավելի շատ հնարավորություններ ունեն տաճար այցելելու, քան մյուսները: Բայց եթե մի անգամ եղել ենք տաճարում և այնտեղ զգացել ենք Հոգին, մենք պետք է առիթն օգտագործենք՝ ամեն օր խորհելու տաճարային ծիսակատարությունների վերաբերյալ և մտածենք մեր կապած ուխտերի մասին: Անելով դա մենք կքաջալերվենք ամեն օր մտածել և գործել ավելի արդար ձևով:

Մենք ի վիճակի չենք լինի հիշել տաճարի մասին ամեն ինչ, բայց մենք պետք է հիշենք յուրաքանչյուր այցելությունից հետո որքան հնարավոր է ավելի շատ: Մենք պետք է նաև ուսումնասիրենք սուրբ գրքերը և տաճարի մասին մարգարեների խոսքերը: Դրանցից մի քանիսը ներկայացված են այս դասընթացում:

Դուք կարող եք դասընթացի մասնակիցներից մեկին խնդրել ամփոփել հետևյալ միտքը, որը գտնվում է *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի 10-րդ էջում:

«Տաճարային ծիսակատարությունը առաջին այցից լիովին չի հասկացվի: Այն միայն մասնակիորեն կհասկացվի: Վերադարձեք կրկին, կրկին ու կրկին: Վերադարձեք սովորելու համար: Այն բաները, որոնք անհանգստացրել են ձեզ կամ բաները, որոնք զարմացրել են ձեզ կամ որոնք ձեզ խորհրդավոր են թվացել, ձեզ համար հասկանալի կդառնան:

Երբ հնարավորություն ունենաք տաճարում հաճախելու օժտման նիստի կամ ականատես լինելու կնքման, խորհեք ձեր առաջ ցուցադրվածի խորը իմաստի մասին: Եվ ձեր այցելությունից հետո, պահեք այդ բաները ձեր մտքում, խաղաղ հոգով ու աղոթքով վերհիշեք դրանք և կնկատեք, թե ինչպես է աճում ձեր գիտելիքը:

Տաճարային փորձառության մեծագույն արժեքներից մեկն այն է, որ այն ներկայացնում է այս երկրի վերաբերյալ Աստծո նպատակների լայնածավալ և համապարփակ մի համայնապատկեր: Երբ մեկ անգամ լինում ենք տաճարում (և մենք կարող ենք վերադառնալ և թարմացնել մեր հիշողությունները) կյանքի իրադարձությունները դասավորվում են մի համակարգի մեջ: Հեռանկարային տեսակետից մենք կարող ենք տեսնել, որտեղ ենք մենք և կարող ենք արագորեն նկատել, թե երբ ենք շեղվում ուղուց»:

2. Հիշեք, որ ողջ տաճարային երկրպագության կենտրոնը Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը:

Սուրբ գրքերը սովորեցնում են, որ տաճարներ կառուցելու կարևոր պատճառ է այն «որ Մարդու Որդին տեղ ունենա իր ժողովրդին ցույց տալու իրեն» (ՎԿՈՒ 109.5): Տաճարային խորհրդանիշներն ու ծեսերը կենտրոնացնում են մեր ուշադրությունը Փրկչի վրա:

Բացատրեք, որ Փրկիչն Իրեն ցույց տվեց Կիրթլենդի Տաճարում: Նա հայտնվեց Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին ընդունելու տաճարը որպես Իր տուն: Այս այցելությունը գրվել է Վարդապետություն և Ուխտեր 110.1–10 հատվածներում: Խնդրեք հանձնարարություն ստացած դասընթացի մասնակցին կարդալ և մեկնաբանել այս հատվածը:

• Ի՞նչ օրհնություններ է խոստացել Փրկիչը նրանց, ովքեր տաճարներ են կառուցում և հաճախում:

ՏԱՃԱՐՈՒՄ ԸՆՏԱՆՔՆԵՐԸ ԿՆՔՎՈՒՄ ԵՆ ՄՐԱՍՐՆ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Մաղաքիա Դ. 5–6:

Խնդրեք հանձնարարություն ստացած դասընթացի մասնակցին ամփոփել Եղիայի մասին տեղեկությունը, որը գտնվում է *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար գրքույկի* 23–24-րդ էջերում:

Բացատրեք, որ Եղիան վերադարձել և վերականգնել է քահանայության բանալիները, որը թույլ է տալիս ընտանիքներին կնքվել միասին հավերժության համար:

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Վարդապետություն և Ուխտեր 110.13–16: Այնուհետև խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ հետևյալ միտքը, որը գտնվում է *Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար* գրքույկի 28-րդ էջում:

«Այդ նույն օրից՝ 1836թ. ապրիլի 3-ից, որդիների սրտերը սկսեցին դառնալ դեպի իրենց հայրերը: Դրանից հետո արարողությունները ոչ թե ժամանակավոր, այլ հարատև բնույթ ստացան: Կնքելու զորությունն արդեն մեզ հետ էր: Երկնքից տրված բոլոր լիազորություններից դա ամենաարժեքավորն էր: Այդ զորությունը իմաստ և հավերժական հարատևություն է հաղորդում թե՛ ողջերի, թե՛ մահացածների համար պատշաճ իշխանությամբ կատարվող բոլոր արարողություններին»:

Փրկիչը նկարագրում էր կնքելու իշխանությունը, երբ Նա խոսում էր Իր Առաքյալ Պետրոսի հետ, ինչպես գրված է Մատթեոս ԺԶ.19-ում: Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ այդ հատվածը:

Բացատրեք, որ այս նույն բանալիները այսօր կրում է Եկեղեցու մարգարեն և Նախագահը: «Կնքելու այդ սրբազան զորությունն այժմ Եկեղեցում է: Ոչինչ չի ընդունվում առավել սուրբ դողդոջյունով նրանց կողմից, ովքեր գիտեն այդ լիազորության կարևորությունը: Ոչ մի բան չի պահպանվում առավել խնամքով: Յուրաքանչյուր ժամանակահատվածում երկրի վրա կան սահմանափակ

թվով մարդիկ, որոնք կրում են կնքելու այդ զորությունը յուրաքանչյուր տաճարում կան եղբայրներ, որոնց տրված է կնքելու զորությունը: Ոչ ոք չի կարող ձեռք բերել այն, եթե դա նրան չտրվի մարգարեի, տեսանողի և հայտնողի՝ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահի կամ նրանց կողմից, ում նա տվել է ուրիշներին այն փոխանցելու իրավունքը» (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար,* 24, 26):

Բացատրեք, որ կնքման արարողությունները ներառում են ամուսնուն և կնոջը միմյանց հետ կնքելը և երեխաներին ծնողների հետ կնքելը: Երբ ծնողները կնքվում են տաճարում, նրանցից ծնված երեխաները ծնվում են իրենց ծնողների կնքման ուխտի մեջ և կարիք չունեն կնքվելու իրենց ծնողների հետ:

• Ի՞նչ եք կարծում տաճարում միասին կնքված լինելը ինչպե՞ս կարող է ազդել ընտանիքի ամենօրյա մտքերի և գործողությունների վրա:

• Ձեր կարծիքով ի՞նչ օրհնություններ կգան ընտանիքին իրենց տաճարային կնքման շնորհիվ:

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է. «Երբևէ եղե՞լ է մի տղամարդ, որն իսկապես սիրել է կնոջ, կամ մի կին, որն իսկապես սիրել է տղամարդու, որը չի աղոթել, որ իրենց հարաբերությունները շարունակվեն գերեզմանից այն կողմ: Երբևէ եղել են ծնողներ, որոնք թաղել են իրենց երեխային և չեն ձգտել հավաստման, որ իրենց սիրելին կրկին իրենցը կլինի գալիք աշխարհում: Մի՞թե որևէ մեկը կարող է հավատալ հավերժական կյանքին և կասկածել, որ երկնքի Աստվածը կշնորհի իր որդիներին ու դուստրերին կյանքի այն ամենաարժեքավոր հատկանիշը՝ սերը, որն իր ամենահիմնաստավորված արտահայտությունն է գտնում ընտանեկան հարաբերությունների մեջ: Ոչ, առողջ բանականությունը պահանջում է, որ ընտանեկան հարաբերությունները շարունակվեն մահից հետո: Մարդկային սիրտը ձգտում է դրան և երկնքի Աստվածը բացահայտել է մի ուղի, որի միջոցով այն կարող է ապահովվել: Տիրոջ տան սրբազան արարողություններն ապահովում են դա»:

ՏԱՃԱՐՆԵՐԸ ՄԵՋ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՆ ՏԱԼԻՍ ԾԱՌԱՅԵԼ ՆԻԱՆՑ, ՈՎՔԵՐ ՄԱՀԱՑԵԼ ԵՆ

Խնդրեք դասընթացի մասնակիցներին կարդալ Աբդիայի Ա.21:

Մարգարե Ջոզեֆ Սմիթը բացատրել է, թե ինչպես Եկեղեցու անդամները կարող են փրկիչներ դառնալ Սիոն սարի վրա:

«Բայց ինչպե՞ս պետք է [Սրբերը] փրկիչներ դառնան Սիոն սարի վրա: Կառուցելով իրենց տաճարները, կառուցելով իրենց մկրտության ավազանները և գնաով առաջ ու ստանալով բոլոր արարողությունները՝ մկրտությունները, հաստատումները, լվացումները, օծումները, կարգումները և կնքման իշխանությունները իրենց գլուխների վրա՝ իրենց նախնիների համար, ովքեր մահացել են և փրկագնելով նրանց, որպեսզի նրանք կարողանան դուրս գալ առաջին հարության ժամանակ և բարձրացվեն նրանց հետ մինչև փառքի գահեր և այստեղ է շղթան, որը կապում է հայրերի սրտերը զավակներին, և զավակներինը՝ հայրերին, որն իրականացնում է Եղիայի առաքելությունը» (*History of the Church,* 6:184):

«Մահացածների փոխարեն տաճարներում կատարվող այս աշխատանքը պետք է իրականացվի նույն ինքնազոհ նվիրման և զոհաբերության ոգով, որը բնորոշում էր Վարդապետի կյանքը» (Նախագահ Թոմաս Ս. Մոնսոն):

Բացատրեք, որ մեր Երկնային Հայրը, որպես իր փրկության ծրագրի մի մաս, ուղի է պատրաստել նրանց համար, ովքեր մահացել են առանց ստանալու ավետարանի փրկարար արարողությունները, որպեսզի նրանք կարողանան ստանալ այդ արարողությունները: Հոգևոր աշխարհում մարդիկ հնարավորություն ունեն լսելու ավետարանը: Նրանք այն կարող են ընդունել այնտեղ, սակայն չեն կարող ստանալ ավետարանի արարողություններն իրենց համար: Տերը պատվիրել է մեզ նրանց համար կատարել այդ արարողությունները սուրբ տաճարներում: Մենք պետք է հատուկ ջանքեր գործադրենք կատարելու ընտանեկան պատմության աշխատանքը, որպեսզի կարողանանք կատարել արարողությունները մեր իսկ նախնիների համար:

Տաճարներում մահացածների համար կատարվող արարողությունները ներառում են մկրտությունները, հաստատումները, քահանայության կարգումները, օժտումները և կնքումները՝ ամուսնուն կնոջ հետ և ծնողներին երեխաների հետ:

Մենք պետք է որքան հնարավոր է հաճախ վերադառնանք տաճար, որպեսզի կարողանանք ծառայել նրանց, ովքեր մահացել են, արարողություններ կատարելով նրանց համար: Մենք կօրհնենք նրանց կյանքը, ում ծառայում ենք և կօրհնենք նաև մեր սեփական կյանքը: Տեղեկություններ ընտանեկան աշխատանք կատարելու վերաբերյալ և մեր նախնիների համար արարողություններ կատարելու մասին տրված է *A Member's Guide to Temple and Family History Work* (34697) ձեռնարկում:

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնն ասել է.

«Տաճարային օժտման և կնքման արարողությունների կարևորումը մեր ընտանիքի անդամներին կմոտեցնի միմյանց և յուրաքանչյուր ընտանիքի անդամի մեջ կարթնացնի ցանկություն, մատչելի դարձնել այդ նույն օրհնությունները մեր սիրելիների համար, ովքեր մահացել են….

«Մահացածների համար մեր տաճարներում կատարվող այս աշխատանքը պետք է իրականացվի նույն ինքնազոհ նվիրման ու զոհաբերության ոգով, որը բնորոշում էր Վարդապետի կյանքը: Երբ մենք հիշում ենք Նրան, մեզ համար հեշտ է դառնում կատարել այս կենսական աշխատանքի մեր անձնական մասը: Ամեն անգամ, երբ նայում ենք այս սուրբ շենքերից մեկին, թող որ մենք հիշենք այն հավերժական հնարավորությունների մասին, որոնք գտնվում են դրանց ներսում, ոչ միայն մեզ համար, այլ նաև մեր մահացածների համար» (*Pathways to Perfection* [1973], 206–7):

ԵԶՐԱԿԱՑՈՒՄ

Շեշտեք, որ տաճար հաճախելը թույլ է տալիս մեզ՝ ծառայել ուրիշներին և շարունակել ձեռք բերել ավելի մեծ հոգևոր գիտություն: Կիսվեք հետևյալ մտքով.

«Ոչ մի աշխատանք այնպես չի պաշտպանում այս Եկեղեցին, ինչպես տաճարային աշխատանքը և դրան օժանդակող ծագումնաբանական հետազոտությունները: Ոչ մի աշխատանք չի բերում ավելի շատ հոգևոր մաքրություն: Ոչ մի աշխատանք մեզ չի պարգևում ավելի շատ զորություն: Ոչ մի աշխատանք չի պահանջում արդարության ավելի բարձր չափանիշներ….

«Եթե մենք ընդունենք տաճարային ծեսերի աշխատանքի վերաբերյալ հայտնությունը, կնքենք մեր ուխտերը առանց վերապահման ու արդարանալու, Տերը կպաշտպանի մեզ: Մենք կստանանք բավականաչափ ոգեշնչում, որպեսզի հաղթահարենք կյանքի դժվարությունները….

«Ուրեմն եկե՛ք տաճար, եկե՛ք և պահանջե՛ք ձեզ համար նախատեսված օրհնությունները: Սա սրբազան աշխատանք է» (*Պատրաստվել Մտնելու Սուրբ Տաճար,* 37):

Վերջացրեք դասը՝ կիսվելով վկայություններով: Խրախուսեք դասընթացի մասնակիցներին հաճախ վերադառնալ տաճար, որպեսզի կարողանան ուսուցանվել Տիրոջ Հոգուց:

Դուք կարող եք նշել, որ դասընթացի մասնակիցները կարող են ձեռք բերել Եկեղեցու բաշխիչ կենտրոններից և տանը դիտել *Mountain of the Lord* (53300) տեսաժապավենը: Այս 73 րոպեանոց ներկայացումը պատմում է Սոլթ Լեյքի Տաճարի կառուցման պատմությունը:

Հրավիրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02368 54201 5
36854 201